

Կ. ՈՍԿԱՆՑԱՆ

**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
17-րդ ԴԱՐՈՒՄ**

Ազանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի  
«Տեղեկագրի» 1948 թ. № 1-ից

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 4 8



9(47)13 + 9(47.925)174

39832

Վ. Ոսկանյան  
ՀԱՅ-ՌՈՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐՈՒՄ

Հայ-ռուսական հարաբերությունների հազարամյա պատմությունը դեռևս XIX դարի սկզբից իր վրա է հրավիրել ինչպես հայ, այնպես էլ ռուսական պատմագրության ամենալուրջ ուշադրությունը, բայց այդ ուղղությամբ կատարված աշխատանքը մինչև այսօր էլ հեռու է հարցի նշանակությունը համապատասխան լինելուց՝ և ընդգրկած խնդիրների ծավալով, և տեսական-քաղաքական վերլուծությունների մակարդակով:

Մեր պատմագրությունը առանձնապես քիչ է զբաղվել հայ-ռուսական հարաբերությունների վաղ շրջանով, մասնավորապես XVI—XVII դարերով, մինչդեռ հենց այդ ժամանակներում են սկսվում հայերի կապերը Մոսկովյան պետության հետ:

Հայ-ռուսական հարաբերությունների դարգացման օրեկտիվ նախապայմաններ ու բանուկ ճանապարհներ ստեղծվում են ասիականաբար, սկզբած XVI դարի երկրորդ կեսից, երբ ձևավորվում, ուժեղանում է ռուսական ազգային պետությունը, դառնում միջազգային հարաբերությունների կարևոր գործոն:

Ինչու Մոսկովյան պետության կազմավորման վաղ շրջանում մենք տեսնում ենք փորձեր ռուս-կովկասյան առևտրական ու քաղաքական կապեր ստեղծելու ուղղությամբ: Այսպես, 1466 թվին Մոսկվա է գնում Շիրվանի խանի դեսպան Հասան բեգը և Մոսկվայից էլ ուղարկվում է ռուս դեսպան Լանիլի Գանինը՝ հայտնի վաճառական Աֆանասի Երկիրտինի հետ միասին:<sup>1</sup>

Քաթարական լծի անկումից անմիջապես հետո Իվան III-ին են դիմում վրաց իշխանները, այդ թվում Կախեթի իշխանը՝ Մոսկվայից պաշտպանություն ստանալու նպատակով: Օրըստօրե ուժեղացող Մոսկովյան պետությունն էլ անտարբեր չէր դեպի Մերձավոր Արևելքն ու Անդրկովկասը, թեպես միայն Իվան IV-ի օրոք այդ ուղղությամբ կառավրվեցին ռեալ նշանակություն ունեցող քայլեր: Իվան IV-ի շրջանում ռուս պետության ներքին ամրացման և միջազգային քաղաքականության մեջ նրա դերի մեծացման հետևանքները ճակատագրական դեր խաղացին Անդրկովկասի ժողովուրդների համար: Կազանի և ապա Աստրախանի նվաճումով Մոսկվան դարձավ Անդրկովկասի մերձավոր և վտանահիլի հարևանը: Աստրախանի նվաճման տարում Շամախուց դեսպան է պալիս Իվան Անդի մոս՝ հայերի վաղեմի առևտուրը վերականգնելու առաջարկությամբ և ստանում է ցարի համաձայնությունը: Ինչու 1552 թվին Ռուսաստանի իշխանության տակ են անցնում Պյատիգորսկի չերքեզները, 1557 թվին կարարդինները, նույն թվին Մոսկվայից օգնություն է հայցում Իբերիայի թագավորը: 1563

<sup>1</sup> Срезневский—Жоженко, За год 1466—1472 г. г.,



Թվին Ջենկինսոնի մոտ է դալիս Կալեթիայի իշխան Լևոնի դեսպանը, մի հայ, և խնդրում է տեղեկություն տալ, թե ինչպես կարելի է կապ հաստատել ցարի հետ և ստանալ նրա օգնությունը: Շահամոլ անգլիացին խոստանում է միջնորդություն առևտրական արտոնությունների հույսով, բայց իր նպատակին չհասնելով, չի կատարում խոստումը: Համենայն դեպս 1564 թվին մեք արդեն տեսնում ենք վրացական դեսպանին Մոսկվայում:

Բայց այս կապերը չկարողացան պարարտ հող գտնել XVI դարում: Լիվոնյան 25-ամյա պատերազմը, թաթարների արշավանքները, ներքին լարված դրուժյունը (պայքարը սեպարատիզմի դեմ) խանգարում էին Մոսկվայի և Կովկասի տնտեսական ու քաղաքական հարաբերությունների նորմալ զարգացմանը, որի համար Ֆեոդալական տնտեսածինը և նեղ շրջան չէին ստեղծել նպաստավոր պայմաններ: Համենայն դեպս՝ 1588 թվին Իրեբեյի իշխան Ալեքսանդրը, ի նշան հպատակության, ցարի դեսպանի առաջ հավատարմության կրկնում է տալիս և ռուսական կառավարությունն էլ ղեկավարական օգնություն է հասցնում Վրաստանին: Ռուսները հանդուժյամբ ետ են շարժում թուրքերի հարձակումները, սակայն 90-ական թվականներին վերջերին նորից կարիք է լինում լրացուցիչ օգնության: Այդ նպատակով 1594—1595 թվերին Վրաստանից Մոսկվա են ուղարկվում Խուրշուդ և Արամ դեսպանները, որոնք վրաց թագավորի անունից ցարին ասում են հետևյալը. «Եմ հույսն ու ազգվինը աստված է և դու: Եվ հրամայեցիք պատերազմել շամխալության դեմ և Կաղեկումների երկրում քաղաք գնել և Կուսիկների երկրի ճանապարհները մաքրել ու այն ժամանակ իմ զորքը կմիանա թագավորական զորքին»:

Բորիս Գոգոլնուովը խոստանում է օգնություն և հարուստ նվերներով վերագործնում է դեսպաններին: Հին ախտերի պետական կենտրոնական արևելի պարսկական ֆոնդի գործերում հիշատակություններ կան պարսկական դեսպաններին ու վաճառականներին Մոսկվա կատարած՝ այցելությունների մասին, որոնք նպատակն էր առևտրի զարգացումը և քաղաքական կապերի ուժեղացումը:

Ռուս-պարսկական և հայ-ռուսական մերձեցման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին XVI դարի երկրորդ կեսից, երբ Պարսկաստանին ստեժանակից դարձած Ռուսաստանը կարող էր ոչ միայն ամրապնդել առևտրական ու քաղաքական կապերը, այլև ռազմա-քաղաքական դաշինք կընքել նրա հետ՝ Թյուրքիայի դեմ մղվող պատերազմներում Պարսկաստանին օգնելու համար: Այս է պատճառը, որ շահի դեսպանները բանակցություններ են սկսում Մոսկվայի հետ և խնդրում նրա օգնությունը: Պարսկական դեսպան Հասան բեգը Բորիս Գոգոլնուովին ու ցարին խնդրում էր սաղմոսական

<sup>1</sup> «Ուղեգրություններ», հատոր I, Երևան, 1924, էջ 390.

<sup>2</sup> . . . . . Упование мое и надежда на бога и на тебя, и велели бы восвати шевкалского и казкумские город поставить и дороги через кумитцкую землю очистили и тогда моя рать сойдетца з государевую ратью вместе..

Տմ. Белокуров—Сношения России с Кавказом, стр. 264.

<sup>3</sup> ЦГАДА, фонд Сношения России с Персией. См. также Н. И. Веселовский—Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией, Тома I, II, III, СПб, 1890 г.

միություն կազմել՝ ինչպես Թյուրքիայի, այնպես և դաշնակիցների մյուս թշնամիների դեմ:<sup>1</sup>

Բայց 1600 թվից սկսված սուլը, լեհ-չվեզական ինտերվենցիան և Թյուրք-պարսկական կործանարար պատերազմները թուլացնում են ուսուպարսկական նկատրական ու քաղաքական կապերը: Շահ Արասի նահանջն ու հայության մասսայական գաղթը, գերվարուելյունն ու անտեսական կյանքի քայքայումը խզում են պարսկահայության կապը Ռուսաստանի հետ:

Ռուս-կովկասյան հարաբերությունները վերահաստատվում և ավելի լայն հիմքի վրա սկսում են զարգանալ XVII դարի երկրորդ քառորդից, երբ վերականգնվում է ուսսական պետականությունն ու անտեսությունը և երբ ավարտվում է Անգրիկովկասի բաժանումն ու սկսվում համեմատաբար լրացող ժամանակաշրջան:

Պրոֆեսոր Պրոխիվկատովը գրում է. «XVII դարի առաջին տասնամյակները ուս-վրացական հարաբերությունների համար միանգամայն որոշակի մոմենտ են կազմում: Այդ հարաբերությունները, որոնք XVII դարում սահմանափակվում էին Վրաստանի միայն մի մասի, այսինքն՝ Կախեթիայի, Մոսկվայի հետ ունեցած կապերով, այժմ սկսում են վերաճել Վրաստանի բոլոր քաղաքական միավորումների միատեղ կապերի՝ կովկասի հյուսիսային հարևանի հետ»:<sup>2</sup>

Վրացական իշխան Թեմուրազը 1639 թվին խնդրում է իրեն ընդունել Մոսկվայի իշխանության տակ, իսկ նրա փեսան՝ Իբերիայի իշխան Ալեքսանդրը ուսսական հպատակություն է ընդունում 1650 թվին:

Աղբյուրների հյուսիսային խնուություններում ևս արդեն XVII դարի սկզբներին ստեղծվում էր որոշակի ձգտում զեպի Մոսկվան:<sup>3</sup> Այս բացառություն է Պարսկաստանի ընակչության ոչ-իրանական մասի գրությունների վատթարացումը և այդ վիճակից ելք գտնելու աճող ձգտումներով: Այդ ձգտումը միանգամայն հասկանալի է լինի, եթե հիշենք ջալալիների այն մեծ շարժումը, որը ցնցեց ֆեոդալական տիրապետությունների հիմքերը: Այդ շարժումները միահյուսվում էին հակաիրանական, հակաթյուրքական ազատագրական և դասակարգային շարժումների հետ: Իրանական իշխանության դեմ բարձրանում էր նաև աղբյուրական բնակչությունը, քանի որ Երևանությունն ավելի ու ավելի անցնում էր իրանական էլիտաների ձեռքը, պետությունը դառնում էր իրանական»:<sup>4</sup>

Ռուս-կովկասյան մերձեցումը հեպևանք էր երկու կողմերի փոխադարձ շահագրգռվածություն: Կովկասի ժողովուրդները, առաջին հերթին հայերն ու վրացիները, թյուրք-պարսկական տիրապետության տակից ազատվելու համար իրենց հայացքը բնականաբար պիտի դարձնեին զեպի

<sup>1</sup> Н. И. Веселовский — Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией, том 1, стр. 5.

<sup>2</sup> М. Подшевстов — Материалы по истории грузино-русских взаимоотношений. Тбилиси, 1937 г., стр. V.

<sup>3</sup> История СССР, под редакцией Грекова, Бахрушина, Лебедева, Москва, 1947 г., том 1, стр. 516.

<sup>4</sup> Очерки по истории Азербайджана, Известия Академии Наук Аз. ССР, 1946 год, № 5, стр. 85.

մերձավոր հարևանները, որոնցից միակ վատահելին և ուժեղը Ռուսաստանն էր: Ռուսական պետությունն էլ իր հերթին ձգտում էր ամրապնդել իր կապերը վրացիների և հայերի հետ՝ մերձկասպյան ուսյունների նվաճման, թյուրքական ազդեցության կասեցման և Անդրկովկասում իր դիրքերի ամրապնդման նպատակով:

Ռուսաստանը ցանկանում էր նույնպես առևտրական ուժեղ կապեր ստեղծել մետաքսի և այլ ապրանքների մեծ առևտուր ունեցող Պարսկաստանի հետ ու Մերձավոր Արևելքում հիմնել վատահելի պլացարամ: Եստերի այս զուգազրկությունը այն ռեալ հիմքն էր, որի վրա պիտի զարգանային հայ-ռուսական հարաբերությունները:

Մոսկվայի Հին Ակտերի Պետական Կենտրոնական Արխիվի (ЦГАДА) հայկական ֆոնդը բավական հարուստ նյութեր է տալիս հայ-ռուսական հարաբերությունների մասին, XVII դարի երկրորդ քառորդից սկսած:

1626 թվին Մոսկվա են գնում չորս հայ և երկու պարսիկ վաճառականներ, տանելով 3925 ուռլու ապրանք<sup>1</sup>: Ապրանքների տեսակներն ու չափը ցույց են տալիս, որ դա առաջին և միակ այցը չէր: 1632 թվին վերաբերող գործը<sup>2</sup> հիմք է տալիս եզրակացնելու, որ հայերի կապերը Ռուսաստանի հետ, նույնիսկ այդ շրջանում, չէին սահմանափակվում առևտրական գործարքներով: 1632 թվին թյուրքիայից Մոսկվա է փախչում սուլթանի բազեպաշը, Սարգիս անունով մի հայ, որն իր դիմումի մեջ պատմում է, թե ինչպես նրան նեղում էին, ստիպում ընդունել իսլամական կրոնը, վերավորում էին իր ազգային ինքնասիրությունը: Չհանգուցեցելով այդ, թողնելով առև, տեղ, ազգ ու ազգականներ, նա իր ուսու կնոջ հետ միասին Արիմով անցնում է Ռուսաստան ու գալիս Մոսկվա: Մոսկվայում նա դիմում է միտրոպոլիտ Ֆիլարեթին և մկրտվում, ընդունելով ուղղափառությունը: Հետաքրքիր է նաև այն, որ Սարգիսը Մոսկվա է գալիս ռուսական դեսպան Վոյեյկովի հետ, և ցարը նրան նշանակում է ուժեղ այնպես, ինչպես նրա «եղբայրներին» (այսինքն՝ հայերին):

Հետաքրքիր է հայտնի վաճառական Թավաքալովի գործը, որը վերաբերում է 1641—1647 թվերին: Թավաքալովի ընտանիքը Չուրաչյական նշանավոր վաճառականական տոհմից է: Պարսկաստանից դուրս գալով, այդ ընտանիքն ընդունում է ռուսական նպատակություն և տեղավորվում Աստրախանի հայ գաղութում, սրն ուներ բավականաչափ բնակչություն և սեփական հայ-լուսավորչական եկեղեցի:

Չնայած կրոնական ազատությունը, Թավաքալովի որդի Հովհաննեսը (Իվաչևո Թավաքալովը) փոխադրվում է Մոսկվա մշտական բնակություն և ընդունում ուղղափառություն: Թավաքալովի գործում եղած արձանագրություններն ու նրա խնդրագրերը ցույց են տալիս, որ նա մասնակցել է կալմիկների դեմ ուղղված արշավանքին: Հասկանալի է, որ ռուսները արշավանքին հայերի մասնակցությունը կարող էր լինել միայն կամավոր: Այնպես ուշադրով է ռուսական խոշոր դիպլոմատ, վոյեյովոզ, ստոլնիկ և դվորյանին Դաուգովի բեղմնավոր կյանքն ու գործունեությունը, որի հետևազու ուսումնասիրությունն անկասկած կպարզի շատ մութ ու չլուծված

<sup>1</sup> ЦГАДА, Арх. дела, 1626.

<sup>2</sup> ЦГАДА, Арх. дела, 1632.

հարցեր՝ կապված հայ-ուստական և ուսուցարսական հարաբերութիւնների պատմութեան այս շրջանի հետ: Վասիլի Ալեքսանդրովիչ Դաուզովի (Ալեքսանդրով, Բարայի որդի) կենսագրութեան մեջ նա համարվում է ծագումով հայ՝ 1653 թվին, երբ ուստական ղեկավանները Սուլանում էին, Դաուզովը պարսից շահի պալատականն էր:

Կապվելով ղեկավանների հետ՝ նա, որոշում է փախչել Մոսկվա և ծառայել ուսուցիտութեանը: Իր մտադրութեանն իրականացնելիս նա բռնվում է ու մահապատժի դատապարտվում, բայց Սպանիայի բնակիչները (հայաստանաբար շուղալեցի հայերը) փախցնում են նրան ու հնարավորութիւն տալիս նույն թվին հասնելու Ստորախանում ձմեռող ուսուցիտականներին և նրանց հետ գնալ Մոսկվա: Վեց շաբաթ «Չուզով» կոչված վանքում մնալուց հետո, 1654 թվին Դաուզովը մկրտվում է և ընդունում ուղղափառութիւն: Իր ղեկանադիտական կարիերան Դաուզովը սկսում է Դեսպանական պրիկազի թարգմանի համեստ պաշտոնով, բայց, ինչպես կենսագիրն է գրում, «Դաուզովի արեկկան լեզունը լզիտեմալը, խելքն ու դիվանագիտական ընդունակութիւնները կարճ ժամանակում իրենց վրա հրավիրեցին Մոսկվայի արքունիքի ուշադրութիւնը»:<sup>2</sup>

1667 թվին (հավանաբար կապված Օրդին Նաշչոկինի նշանակման և հայկական առևտրական ընկերութեան պայմանագրի կնքման հետ) Դաուզովը բարձրացվում է ղեկավանի աստիճանի և նույն թվին ուղարկվում Ադրիանապոլիս և Կոստանդնուպոլիս: Երկրորդ անգամ նա Կոստանդնուպոլիս է ուղարկվում 1669 թվին և հաջողութեամբ կատարում է ցարի հանձնարարութիւնը արևելյան պատրիարքների իրավունքների վերականգնման ուղղութեամբ (Պասի՝ Ալեքսանդրիայում և Մակարի՝ Անտիոքում): 1672 թվին Դաուզովը նորից գործուղվում է Կոստանդնուպոլիս՝ Թյուրքիային հետ պահելու Լեհաստանի դեմ պատերազմից: 1675 թվին Դաուզովը ուղարկվում է Միով և Բուխարա, որտեղից վերադառնում է կրելով մեծ զբոհանքներ, հազիվ խուսափելով մահվանից: Ապա նա չորրորդ անգամ է ուղարկվում Կոստանդնուպոլիս Թյուրքիայի արշավանքը Ուկրաինայի դեմ կանխելու և Ռուսաստանի իրավունքները պաշտպանելու համար:<sup>3</sup>

Երբ ղեկանադիտական միջոցներն սպառելուց հետո զործը հասնում է սուլթան Մահմեդ IV-ի արշավանքին, իսկ պատերազմը կանխելու նպատակով նորից մեկնում է Կոստանդնուպոլիս: 1687 թվին Դաուզովը ու իր տղան մասնակցում են Գոլիցինի արշավանքին: միայն 1696 թվին Դաուզովին հաջողվում է պաշտոնաթող լինել, թեպետ 1696 թվին Պետրոս Մեծը նրան ուղարկում է Ազով ու ապա Կոստանդնուպոլիս:

Դաուզովը, ըստ երևույթին, շուղալեցի հայ էր, ապա Դաուզի ընտանիքից, որի մասին հիշատակութիւնների կան աղբյուրներում: Հ. Տեր-Հովհաննիսյանը «Պատմութիւնն Նոր Զուգայուն» գրքի մեջ նշում է, որ Դաուզը անդիլիացիների թարգմանն էր «եւ նշանավոր ոք ըստ մեծութեան»:<sup>4</sup>

Հավանաբար այդ տոհմը էլի էր ավելի շահի թարգմաններ ու պաշտոնյաներ: Պատահական չէ, որ Դաուզովի որդին՝ Վասիլի Դաուզովը պաշտո-

<sup>1</sup> Русский биографический словарь.

<sup>2</sup> Там же.

<sup>3</sup> С. М. Соловьев.—История России с др.времен, том XIII, стр. 849, изд. «Общ. Пользы».

<sup>4</sup> Հ. Տեր-Հովհաննիսյան—Պատմութիւնն Նոր Զուգայուն, հատ. II, էջ 143:

տավարում էր Մասիկայի Դեսպանական պրիկազում և մասնակցում էր հայերի աների վերգրի կազմելուն և նման գործերին:

Սոճա Դավիթի մասին հիշատակութուն կա նաև Դարանաղցու մոտ (էջ 467): Ռուսական ծառայություն կատարող, Ռուսաստան փախած և կամ ուսասիրության մեջ մեղադրված զեմքերի մասին կան և այլ հիշատակություններ: Այսպես, Դարանաղցին իր գրքի՝ «Պատմութիւն Ղազար անուան վարդապետին Բաբերդցու» գլխում պատմում է, որ Ղազարի նկատմամբ կասկածում են, թե նա եկել է «յիսուսն և ի Լեհեն լրտես» և այդ պատճառով «կալան զնա և եղին ի բանտս մանապարտոց»:

Փակագծում նշենք, որ եթե չլինեք վախ հայերի ուսասիրության նկատմամբ, ոչ Ղազարին կձերբակալենին և ոչ էլ Դարանաղցին այդ մասին կգրեր:

Սոսկանյան որքան էլ հետաքրքրական լինեն այս փաստերը, դրանք էպիզոդիկ են և մասսայական ու սխտեմատիկ կապերի արտահայտություն չեն: Հայ-ուսական հարաբերությունները լայն հիմքի վրա դարձանալ են սկըսում միայն XVII դարի երկրորդ կեսից, երբ ուսական պետությունը, անտեսագիտ ու քաղաքականապես ամրապնդվելով, մեծ և ուժեղ բանալի ստեղծելով, Ուկրաինան իրեն միացնելով, սկսում է ավելի ակտիվ արևելյան քաղաքականություն, Դեռևս XVII դարի սկզբներից սկսված հայ-ուսական աշխույժ առևտուրն էլ 60-ական թվականներից զգալի չափերի է հասնում և իր կենտրոնը տեղափոխում Մոսկվա: 1659 թվին Նոր Զուգալցեց Մոսկվա է մեկնում հայտնի խոջա Զաքարե Սահրատովը (Շարխմանով), իր հետ բերելով թանկագին ապրանքներ, այդ թվում մի գահ, որը հայտնի է Աղսանադյա անունով ու մինչև այժմ էլ պահվում է կրեմլում և համարվում ՍՍՌԽ-ի ազամանգային ֆոնդի մեծագույն արժեքներից մեկը: Գահի վրա կա 28 ֆունտ ոսկի, ութ ֆոնտ արծաթ, 897 ադամանդ, 1298 նակինթ, 18,030 փերուզա: Սոճա Զաքարը և նրա հետ եկած ինը վաճառականները շատ լավ ընդունելություն են գտնում, լինում են ցարի մոտ և պատշաճ ձևով վարձատրվում: Յարը թույլատրում է նրանց գնել լավագույն մուշտակներ և կարգադրում է Գալսկաստան թողնել առանց մաքսի դանձման: Յարին վաճառված դահլը, այսպես կոչված «նվերը», արտակարգ էր ոչ միայն իր մեծ արժեքով, այլև նշանակությամբ: Պատահական չէ, որ դահլը շինվում էր խոջայի տանը գաղտնի և գաղտնի էլ ուղարկվեց Մոսկվա: Հավանաբար այդ էր պատճառը, որ հայերի առևտուրը վեց տարով ընդհատվում է: Ինչպես պարզվում է 1666—74 թվերին վերաբերյալ № 2 գրքի արձանագրութունների ուսումնասիրությունից, Սոճա Զաքարը մինչև 67 թիվը զենևս ցարին չէր ուղարկել այն ապրանքները, որոնց դիմաց փողն ստացել էր յոթ տարի առաջ: Ամենայն հավանականությամբ շահի համար գաղտնիք չհնաց հայ վաճառականների առանձնահատուկ վերաբերմունքը դեպի ցարը, երբ ամեն առիթով շեշտվում էր հայերի պատրաստակամությունը Մասիկայի ցարին ծառայելու:

Սոճա Զաքարը Դեսպանական պրիկազում նշում էր, որ «Շահը նրա հորը պարզեներ անում էր, բայց շահական մեծությունը մուսուլմանա-

հաճ կրոնի է, իսկ իրենք քրիստոնեական հավատի մարդիկ են, ուստի նրանք ուրախ են ծառայելու և աշխատելու մեծ թագավորի համարը:<sup>1</sup>

Զուգայեցի հայ վաճառականներին հաջողվում է 60-ական թվականներին ոչ միայն վերականգնել ուսական առևտրի իրավունքը, այլև շահից ստանալ մենաշնորհ պարսկական ողջ մետաքսի գնման և վաճառահանման համար: Քանի որ մետաքսի հիմնական շուկան Ռուսաստանն ու Արևմտյան Եվրոպան էր, հայերը ձգտում էին ստանալ ուսական արանգիտի իրավունք: Այդ նպատակով 1666 թվին Մոսկվա է գալիս շուղայեցի վաճառականների ներկայացուցչութունը՝ Գրիգոր Լուսիկովի և Մանեան Ռոմոլոֆսիչե ղեկավարութեամբ: Հայկական առևտրական ընկերութեան ներկայացուցիչները բանակցութիւններ են սկսում Օրդին Նաշչոկինի կառավարութեան հետ և առաջադրում իրենց պայմանագրի նախագիծը: Չնայած այն բանին, որ ուս վաճառականները բազմիցս (1626—1646, 1648 և 1651 թվերին) բողոքել էին օտարերկրյա վաճառականներին տրվող իրավունքների ու արտոնութիւնների դեմ, չնայած նրան, որ XVII դարի ընթացքում ոչ մի երկիր՝ ոչ Անգլիան, ոչ Հոլանդիան և ոչ էլ Ֆրանսիան չկարողացան արանգիտային առևտրի իրավունք ստանալ, չնայած խիստ մերկանտիլիստական քաղաքականութեան, ուսական կառավարութիւնը առաջին անգամ և միայն հայերին տվեց արանգիտային առևտրի իրավունք և արտոնութիւններ, կնքելով 1667 թվի հայտնի պայմանագիրը:<sup>2</sup>

Այս հանգամանքը բացատրվում է ոչ միայն հայկական առևտրից սպասվող մեծ մաքսեր և այլ օգուտներ ստանալու նկատառումով, այլև քաղաքական ծրագրերից բխող անհրաժեշտութեամբ: Ռուսաստանի կառավարութիւնը շատ լավ էր հասկանում հայերի և վրացիների ոգրերգական վերձակը և նրանց պատրաստակամութիւնը՝ պայքարել ուսանքի օգնութեամբ իրենց ազատագրութեան համար: Ինչպես գրում է Պոտոմոն, «Արևելքից, հարավից և արևմուտքից մահմեդական ցեղերն էին ամուր պատնեղով բաժանել հայութիւնը քրիստոնյա աշխարհից. հյուսիսում յուր նման տառապում էր քրիստոնյա Վրաստանը, ուժ չունենալով դիմադրել շարունակ հարձակումներին. և միայն կովկասյան շղթաների մյուս կողմում գտնվում էր մի զորեղ ահրութիւն, որ սասանեցրել էր թաթարներին և իր իշխանութիւնը տարածել մինչև Վոլգա մեծ գետի բերանը, մինչև հասպից ծովի ափերը: Այդ իսկ պատճառով էլ Հայաստանի աչքը ձգտում և հասում է գեպի հյուսիս»:<sup>3</sup>

«Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի օրերը նշանավոր եղան հայերի համար թանկագին մի կարգ հրովարտակներով և արքունի հրամաններով, որոնցով և ամբացավ հայերի բարոյական և նյութական կապը ուս ազգի հետ»:<sup>4</sup> Այս առանձին վերաբերմունքը հայերի նկատմամբ շարունակվեց և ավելի խորացավ Պետրոսի շրջանում: Պետրոս Մեծը Մայսլեշկինին գրված մի նամակում նրան առաջարկում է. «ամեն կերպ աշխատեցեք հայերին հրա-

<sup>1</sup> ЦГАДА, Арм. дела. 1660 г., лист 18.

<sup>2</sup> ЦГАДА, Арм. дела, № 1—4, л. 36—42.

<sup>3</sup> Պոտոմոն—Վերածնութիւն Հայաստանի, Փարիզ, 1904 թ., էջ 3—4:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 5:

վերել, իսկ ժուտութանները թե՛վը որքան հնարավոր է պահպանեցնել, լայց այնպիսի գաղտնի միջոցներով, որ իրենք ոչինչ չհասկանան»<sup>1</sup>

Հիշյալ փաստերն ապացուցում են, որ Հայկական ընկերության հետ պայմանագրեր կնքելը ոչ մի կերպ չի կարելի դիտել որպես լույ տնտեսական գործարք: Այս տեսակետից հետաքրքրական է, որ այդ պայմանագրով սահմանված արտոնությունները տարածվում էին ոչ միայն Նոր Զուղայի, այլև Հայաստանի մյուս մասերի վաճառականության վրա՝ որպես հայտը լայն տրված արտոնություն: XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին ռուսները հետ հայերի ունեցած ամբողջ առևտուրն ըստ էությունից կատարվել է այդ պայմանագրի նշանաբանի տակ. պատահական չէ, որ բոլոր հայերը առևտրի թույլտվություն խնդրելու խնդրում էին նրանց հայկական պայմանագրից: Որ այդ պայմանագրերը էր ուժը չէր կորցրել նաև XVIII դարում, հաստատվում է այն ուշագրավ փաստով, որ 1732 թվին հայկական պայմանագրի և Լուսինիովի հանդիսավոր խոստման արձանագրության պատճենները հանվում են և հանձնվում Կոստավարոզ Սենատին»<sup>2</sup>

Թվում է, որ բոլոր հիմքերը կան այս պայմանագրի կնքումը հայառուսական հարաբերությունների մեջ բեկման կետ համարելու, երբ էպիզոդիկ կապերը փոխարինվում են ամուր, սխտեմատիկ ու ծավալուն առևտրական հարաբերություններով:

Պարզ է, որ այս կապերը պետք է զուգորդվեն քաղաքական կապերի հետ և նպաստեն նրանց զարգացմանը: Սրա խոստումն ապացույցներ են հանդիսանում հայերի մեծ հոսանքը դեպի Մոսկվա, գաղութների ստեղծումն ու լայնացումը, ռուսական պետության ծառայելու փաստերը, էջմիածնի կաթողիկոսության դիմումները ռուսական ցարին և այլն:

Պարզ է նաև, որ ռուսական պետությունը նույնպես հայ ռուսական առևտրական պայմանագրերը դիտում էր որպես կարևորագույն քաղաքական ձեռնարկություն: Պատահական չէ, որ Պարսկաստանի հետ Ռուսաստանի վրայով արանդիտային առևտրի իրավունք պահանջող եվրոպական դիվանագետները հետ վարած բանակցությունների ընթացքում ռուսական կողմը միշտ առաջի պլանի վրա էր քաշում թյուրքիայի դեմ ռազմական համադործակցության հարցը՝ որպես արանդիտային առևտրի իրավունք տալու առաջին նախապայման:

Ռուսաստանի այս ձգտումը միանդամայն հասկանալի կլինի, եթե հիշենք, որ թյուրքիան չէր հրաժարվում Միջին Ասիան նվաճելու և Պարսկաստանն ու Ռուսաստանը միմյանցից բաժանելու իր ծրագրից: Բյոփուլու Մահմեդ վեզիրի ղեկնությունից շրջանում (1656—1661) ուժեղացած թյուրքական պետականությունը այդ ծրագիրը ավելի համառոտին էր փորձում կերտել: Ճիշտ է, Բյոփուլուի մահով այդ ծրագրի կատարումը ձախողվեց, լայց այն թյուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգից չհանվեց: Այդ պայմաններում Ռուսաստանը պետք է դաշնակիցներ փնտրեր ինչպես Անդրկովկասի ժողովուրդների մեջ, այնպես էլ ի դեմս Պարսկաստանի, որը կարևոր ուժ էր ոչ միայն իր ռազմական պտոնցիվարով, այլև տնտեսական ու ստրատեգիական իր պայմաններով: Հայկական տակ-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> ШАГА, Арм. дела, 1687 г., л. 104—105.

ուսըը կնպատակի և՛ ռուս-պարսկական կապերի զարգացմանը և Անդրբ-կովկասի շրջանում ուժեղ պլացդարմ ստեղծելուն, միաժամանակ տնտեսա-կան հարված նախապատրաստելով Թյուրքիային, զրկելով նրան տրանս-դիտային նշանակութիւնը: Վերջապես, հայկական ընկերութեան միջոցով Ռուսաստանը կկարողանա կազմակերպել ռազմաքաղաքական հետախուզու-թեան գործը Անդրկովկասում, ինչպես և Պարսկաստանում, Թյուրքիայում ու Եվրոպայում:

Հայկական ընկերութեան հետ կնքված պայմանագրի քաղաքական նպատակներն մասին պարզ պատկերացում ունենի 17-րդ դարի քաղաքա-կան գործիչները: Այդ պարզ էր ոչ միայն ռուսական դիվանադիտութեան մեծանուն ներկայացուցիչ Օրդին Նաչչակինի համար, այլև նրա ժամանա-կակից մյուս գործիչների համար, որոնք հակառակ ռուս վաճառականու-թեան բազմաթիվ վճռական բողոքներին (1672, 1673, 1676, 1679, 1681 թ.թ.) շարունակում էին նպաստել հայկական առևտրի զարգացման գործին:

Անգամ Յուրի Կրիմանիչը կողմնակից էր հայ վաճառականների առև-տուրը Թուրքիայում, թեև իր դրքի՝ կրկու մեծ հատորների բոլոր գլուխներում ամենախիստ կերպով հարձակվում է այլազգի վաճառականնե-րի վրա՝ նրանց դիպելով որպես ամենամեծ զժրատութեան սլավոն ժողո-վուրդների համար: Միովորոշիւթեան այդ մարտնչող գաղափարախոսը հանդես է գալիս որպես ռուս պետութեան և առևտրական կապիտալի շա-հերի օգնկալի պաշտպան, պահանջելով երկրից վաճառել բոլոր օտարերկրա-ցիներին, հայածել նրանց ինչպես գայլերի, պայքարել նրանց դեմ որպես համաճարակի դեմ: Հասկանալի է, որ Կրիմանիչը դիտք է արտահայտել ձեռնարկող նացիոնալիզմի տրամադրութիւնները, որոնք ծագում էին առա-ջին հերթին առևտրական բուրժուազիայի ընդերքում:

Ընկեր Ստալինը գրում է. «Հիմնական հարցը երիտասարդ բուրժուա-զիայի համար շուկան է: Վաճառել իր ալքոհոլները և հողթող դուրս գալ այլ ազգութեան բուրժուազիայի հետ սեղի ունեցող մըցութիւններից— այս է նրա նպատակը: Այստեղից նրա ցանկութեանը— ապահովել իրեն համար «իր», «հայրենի» շուկան: Շուկան առաջին դպրոցն է, որտեղ բուր-ժուազիան նացիոնալիզմ է սովորում»<sup>2</sup>:

Իայց ոչ կոնկրետ ընդհանրացիան և ոչ էլ սահմանվորվող նացիոնալիզմը չխանդարեցին անգամ Յուրի Կրիմանիչին գրել, որ Ռուսաստան կարելի է թողնել հայ հարուստ վաճառականներին, որոնք առևտրի են գալիս պարսկական դեսպանների հետ:

Ինութագրական է, որ 1667 թ. պայմանագրի նախապատրաստման 15 ամիսների ընթացքում ռուս կառավարութեանը ոչ մի անգամ չդիմեց վա-ճառականների խորհրդին, իսկ հետո էլ անտարբեր մնաց նրանց պահանջ-ները նկատմամբ: Պատահական չէ նաև այն, որ պայմանագիրն ստորա-գրելու հաջորդ տարին (1668 թ.) ցարը շահի մոտ ուղարկեց իր գեսարան և Հայկական ընկերութեան Մոսկվայի գործակալ անգլիացի Թոմաս Բրայսին Թյուրքիայի դեմ նախապատրաստվող պատերազմին Պարսկաստանին մա-նակից գործնելու համար: Այսպիսով, առևտրական պայմանագրի քաղա-

<sup>1</sup>Русское государство в половине XVII века, Рукопись времени царя Алексея Михайловича. Открыл и издал П. Безсонов. Москва, 1859 г. (часть I) и 1860 г. (ч. II)

<sup>2</sup> Կ. Վ. Ստալին—Երկեր, Երևան, 1947 թ., հատոր II, էջ 356:

քական նշանակութիւնը լավ հասկանում էին և՛ Մոսկվայում, և՛ Սպահանում, և՛ Ջոզղայում: Բայց կովկասյան պրացզարմ ստեղծելու քաղաքականութիւնը չէր սահմանափակվում Թյուրքիայի դեմ պայքարելու խնդրով: Ենթացում է հող պատրաստելու նաև իրանական Անդրկովկասում ամբանալու և անհրաժեշտութեան ու հնարավորութեան դեպքում Պարսկաստանի դեմ պայքարելու համար:

Հայտնի է, որ դեռևս Բորիս Գոգոլնովը բանակցում էր Շահ Աբաս առաջինի հետ մերձկասպյան քաղաքներ Բաքուն և Իերբեղը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Ռուսաստանի այդ ձգտումը իր ուժը պահպանում է նաև հետագայում, նամանավանդ որ Բաքուն, Իերբեղը և Շահաբխի մեծ դեր էին կատարում Ռուսաստանի արևելյան առևտրում: Եթե այդ Ցուգիրը XVII դարի կեսերին իրական կերպարանք ստացած չլիներ, ապա Ցուրի կրիթանիչը (որը Ռուսաստանում էր 60-ական թվականներին) չէր կարող այդքան պարզ ու որոշակի արտահայտել ռուսական պետութեան ձգտումը դեպի Մերձավոր Արևելք: Պատահական չէ, որ կրիթանիչը առաջարկում է ծավալել արևելյան առևտուրը, կառուցել նավատորմ, ամբանալ ծովափին և զարգացնել տնտեսական կյանքը:<sup>1</sup>

Հավանաբար, շփվելով Մոսկովյան պետութեան ազդեցիկ շրջանների հետ, նա քաջ ծանոթ էր նրանց ձգտումներին ու պլաններին:

Կրիթանիչն առաջարկում էր «կասպից ծովը լցնել բարեղին ցարական նավերով՝ սլաբկական ապրանքների համար»,<sup>2</sup> առանկրով բնակեցնել կասպից ծովի անրնակ կղզիներն ու ամերը, տեղացիներից հարկ վերցնել և վաճառականներից մաքս դանձել: Բացի այս, նա առաջարկում էր «Այն-տեղ իրենց (այսինքն՝ առանների: Վ.Ո.) և տեղացիների միջոցով ձեռնարկել խաղողագործութեան՝ ինչքան բավական կլինի ողջ թագավորութեան համար»:<sup>3</sup> Այսպես «Այդ ծովն իր նավերով լցնելով տիրակալ ցարը կգառնար ծովերի արքան»:<sup>4</sup>

Կասպից ծովի տիրապետութեան և պարսկական առևտուրը դեպի Մոսկվա դարձնելու դեպքում կոտանդնուպոլսի վրայով կատարվող ողջ առևտուրը կկատարվիր Ռուսաստանի միջոցով, մինչդեռ եվրոպացիները «պահում են Ցարգրաղը իրենց առևտրական նավերով՝ որպես խիտ առատով շրջապատված»:<sup>5</sup>

Կրիթանիչը չի սահմանափակվում ընդհանուր պլաններով, այլ առա-

<sup>1</sup> Գիթանովը նշում է, որ կրիթանիչի պլանները «չառ կողմերով հիշեցնում են Գեորգ Ի-ի ծրագիրը»: Г. В. Плеханов, Сочинения, том XX, стр. 90.

<sup>2</sup> «Хвалинское море наполнить бы царскими карабми, добро устроенными для перских товаров». Юрий Крижанич—Русское Государство. . . т. 1, стр. 18.

<sup>3</sup> «И тамо завести винаграды чез свое и чез тамошние люди, колико бы доста (բավական Վ.Ո.) было сему кралевству».

<sup>4</sup> Наполнивши Господарь царь оно море своими карабми, учинил бы и с Господарем моря.

Նույն տեղում, էջ 17:

<sup>5</sup> «Держат Цариград своими торговыми ладьями, будто густым лесом окружен. Того торговли велик дел (մեծ մասը: Վ. Ո.) обратил бы к нам, и проходил бы чез (через. Վ. Ո. .) наши руки». Ю. Крижанич—Русское Государство. т.1, стр. 18.

ջարկում է կոնկրետ միջոցներ՝ մաքուր ու ապահով ճանապարհներ, առևտրական կամպանիաներ<sup>2</sup> և նրանց պաշտպանություն կազմակերպելու<sup>3</sup> վերաբերյալ:

Պրոֆ. Պոլիսկիտովը գրում է. «Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունն այդ շրջանում հետապնդում է երկու սերտորեն կապված և փոխադարձաբար միմյանց հետ զուգորդվող նպատակներ. մի կողմից պատերազմում է կովկասյան պայքարով, գլխավորապես թյուրքիայի դեմ, մյուս կողմից պատրաստվում է հարձակում Պարսկաստանի վրա, գլխավորապես Անդրկովկասյան, պոպլին հերթին Արևելյան Անդրկովկասյան (Շամախի) և ավելի լայն՝ մերձկասպյան շրջանների գրավման նպատակներով: Գաղութային հարձակման այս պատրաստությունն ամբողջությամբ այդ ժամանակ արտահայտվում է՝ համակովկասյան մատչարի բարդ դիպլոմատիկական աշխատանքով... Հայկական առևտրական կապիտալի միջոցով Անդրկովկասը Ռուսաստանին ավելի սերտորեն կապելու փորձերով, վերջապես կովկասում պլանայնորեն վարվող տնտեսական ու ֆադախական հետախուզություններով: (Ընդգծումը իմն է: Վ. Ո.)

Այս ընթացքը՝ և՛ դիվանագիտություն, և՛ էկոնոմիկա և՛ հետախուզական աշխատանք, իհարկե, իրար հետ ամենասերտ ու բարդ զուգորդման մեջ»:<sup>4</sup>

Ռուս-հայկական քաղաքական կապերի առկայությունն ապացուցող փաստերի շարագրությունը ցույց կտա, թե ինչպես առևտրական տնտեսական կապերը անմիջականորեն զուգորդվում էին քաղաքական կապերի հետ, հենց նույն Հայկական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովի գործունեություն մեջ և թե ինչպես պարզ էին հասկանում այդ միասնությունը իրենք, այդ դարի մարդիկ՝ Լուսիկովը, Ռոմոդամսկին և ուրիշները:

Ռազինի ապստամբությունը շրջանում ընդհատված առևտուրը վերականգնելու համար 1671 թվին Մոսկվա է գալիս Հայկական ընկերության Լիազոր Ստեփան Ռոմոդամսկին և ցարին հանձնում է մի լատիներեն նամակ (գրված հայ վաճառական ջուղայեցի խոջա Ջաքարի կողմից), որի մեջ շեշտվում է հայ վաճառականության պատրաստակամությունը ուսական ցարին ծառայելու:<sup>5</sup>

Բացարկ հետաքրքրություն են ներկայացնում ընկերության մյուս ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովի գործունեությունը վերաբերյալ արելիվում պահված Փրագմենտները, որոնք կարիք ունեն լուրջ ու մանրազնին ուսումնասիրություն: Ինտանտանտան պրիկազում արձանագրված է, որ առևտրի մասին բանակցելուց հետո, նրան հարց է արվել, թե «չունի՞ որևէ այլ գործ ուս կառավարության հետ». և հայը ասաց. «որ նա, ծառայելով մեծ ցարին՝ նորին թագավորական մեծությանը, այլ գործեր էլ ունի հայտնելու, քանի որ ինքը նույնպես քրիստոնեական հավատի մարդ է»:<sup>6</sup>

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>2</sup> » » » 27:

<sup>3</sup> » » » 20, 22:

<sup>4</sup> М. А. Полиевктов—Проект Бругемана и русская оккупация прикаспийских областей в 20-х годах XVIII века, стр. 37.

<sup>5</sup> «Впредь не будет нам иного какого дела, токомо служити и указу вашего царского величества совершении повиноватись». ЦГАДА, Арм. дела, 1666—74 № 2, л. 168.

<sup>6</sup> Նույն տեղում, л. 139:

Այսպիսով Լուսիկովը իր նախածնունդով սկսում է խոսելով քաղաքական գործերի մեջ ակնհայտ կերպով հանդես գալով որպես Ռուսաստանի կողմնակից: Երբ նրան առաջարկվում է ասելիքը տալ գրավոր ձևով, Լուսիկովը հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ գրավոր տալու դեպքում այդ կարող է հայտնի դառնալ շահին, և «նրան այդ ընդհանուր շահից մեծ պատիժ կհասնի»:<sup>1</sup>

Որովհետև Ռուսաստանի շահերը պահանջում էին Պարսկաստանի հետ անտեսական և քաղաքական գործակցության ուժեղացում, Լուսիկովը շարունակ ձգտում էր վերացնել անվստահությունը և ստեղծել միասնական ֆրոնտ Ռուսաստանի և հայութայն համար հիմնական վտանգ հանդիսացող թյուրքերի դեմ: Իրանով է բացատրվում այն հանգամանքը, որ միջադրային հարաբերությունների լավատեղյակ հայ վաճառականներն ու նրանց հեռատես ներկայացուցիչ Լուսիկովը ցարին չէին գիժում Պարսկաստանի նկատմամբ գործնական ձեռնարկումներ կատարելու խնդրով, գիտնանալով, որ պարսկահայութայն ազատագրումը հնարավոր կդառնա միայն թյուրքերի խորտակումից հետո, երբ Ռուսաստանը Արևելքում բացառիկ իշխողի դեր կստանձնի: Թյուրքերի դեմ սուս-պարսկական բյուրեղի ստեղծմանը նպաստելիս, Լուսիկովը միշտ առաջնորդվում է Հայկական ընկերության և Ռուսաստանի շահերով: Երբ Ռազինի ապստամբությունը շրջանում պարսկական սուլտանի հասցրած ֆուսանների փոխհատուցում էր պահանջվում շահի կողմից և շահը ենթադրում էր թե կողակների հարձակումները Պարսկաստանի վրա կատարված են ցարի կամքով, Լուսիկովը աշխատում էր ամեն կերպ ապացուցել ընդհակառակը:<sup>2</sup>

Ինչպես տեսնում ենք, ինքը, շահ Սուլեյմանն անդամ էր կամակամում, որ Լուսիկովը սուսական օրինատացիայի մարդ է, թեպետ վերջինս միայն վտրձում էր հարթել սուս-պարսկական կոնֆլիկտը:

Լուսիկովը պետք է արտակարգ ջանքեր գործադրեր, երզվեր և երաշխավորագիր տար իր ասած ճշմարտությունն ընդունելի դարձնելու համար: Երբ լեհական զինազան Բողզան Գուրդեյը շահին հայտնում է, որ թուրքերը գրավել են Կրեան կղզին և պատրաստվում են Պարսկաստանի վրա հարձակվելու, Լուսիկովին կանչում են շահի մոտ և հարցնում, թե արդյոք Ռուսաստանը չմտա է Լեհաստանի հետ և կկարողանա արդյոք ցարը կանգնել թյուրքերի դեմ: Լուսիկովն ամեն կերպ ապացուցում է, որ Ռուսաստանը ուժեղ է, որ Ռուսաստանի, Լեհաստանի և Պարսկաստանի միավորման դեպքում թյուրքերին ի վիճակի չի լինի գրմադրելը:<sup>3</sup>

Բայց Լուսիկովին չեն հավատում այս անգամ էլ, թեպետ նրան վերջի վերջո հաջողվում է նվաճել շահի վստահությունը: Մի այլ տեղում Լուսիկովը պատմում է, որ շահի հպատակ մի հայ կաթոլիկ Հոսովից Պարսկաս-

<sup>1</sup> Լուսի տեղում

<sup>2</sup> «И ему де во всем том не верили и говорили: ты де с ними одной и называешься царского величества подданным и во всем добра его великого государя хочешь», *Նուսի տեղում*, լ. 142.

<sup>3</sup> Լուսիկովն ասում էր. «В турках едучи слышал, что в пятничной день вышел из мечетей, смотря на небо, кричат: не дай боже, чтобы христианом совокупляться». «ест ли царское величество совокупляясь с поляки учнет обще, и турку де будет совершенный погубе», *Նուսի տեղում*, լ. 142:

տան է գալիս ու բերում է պապի նամակը և վեց թագավորների դրամ-տաները, որոնցով նրանք դիմում էին շահին թյուրքիայի դեմ կռիվ սկսելու համար, խոստանալով իրենց օգնությունը: Շահը սիրով ընդունում է պապի, կայսեր, Լուդովիկոսի և մյուսների գրածոտաները և նույն հային համապատասխան հանձնարարականներով ուղարկում Հռոմ: Ինչպես Լուսինիլին է ասում. «այդ ֆրանկը ուղարկված է Հռոմ Մոսկովյան պետության վրայով»: Իսկ նա շատ կարևոր գործեր ունի ցարի հետ:<sup>1</sup>

Ինչպես երևում է այս մեջբերումից, թյուրքիայի դեմ նախապատրաստվող պատերազմը որոշ իմաստով միավորում էր կաթոլիկներին ու լուսավորչականներին: Լուսինիլովը ձգտում էր ամբացնել նաև ուսու-լիական դաշինքը, որի համար սերտ անձնական հարաբերությունների մեջ էր մտել լինական դեսպան Բոգդան Փուրդեյի հետ: Գեսպանի մոտ նա գովաբանում էր ցարին, ապացուցում լին-ուսական շահերի ընդհանրությունը և ցույց տալիս հայ առևտրի դերը այդ գործում: Այս շատ պարզ երևում է նաև իրեն, լինական դեսպանի ցուցմունքներից, որոնք ապացուցում են նրա նույնպիսի համոզմունքները<sup>2</sup> Լուսինիլովի և Բոգդանի երկարատև զրույցները շահի հետ հանդեպին այն բանին, որ շահը համոզվեց և ավելի իր համաձայնությունը Հայկական ընկերության առևտրի զարգացման վերաբերյալ՝ ցարին ուղարկելով համապատասխան գրամոտա<sup>3</sup>

Արևիվային նյութերը հիմք են տալիս ենթադրելու, որ Լուսինիլովը ձգտում էր վրաստանի ուժեղացմանը, որը կնպաստեր ապագա համատեղ պայքարին: Նա համոզում էր շահին վրացական հողը վերադարձնել թեյ-մուրազ թագավորի թոռանը՝ Նիկոլայ Իվիչովիչին, որը զանրում էր Մոսկվայում ցարի հովանու տակ: Նա պնդում էր, որ ցարը կհամաձայնվի արքայորդուն վերադարձնել միայն այն ժամանակ, երբ Պարսկաստանը կխոստանա հողերի և իրավունքների վերականգնումը և նրա անձի անձեռնմխելիություն: Լուսինիլովը համոզում է իր նպատակին: Շահն ու էհտիմալ զովլաթը համաձայնվում են կատարել նրա պահանջը, և, ինչպես երևում է Մոսկովյովի բերած նյութերից, 1674 թվին Նիկոլայ Իվիչովիչը արդեն Պարսկաստանում էր: Մոսկվա ուղարկելիս Լուսինիլովին էհտիմալ զովլաթը իր մոտ է կանչում և հրամայում ցարին հայտնել նեակալը: «Նորին շահական մեծության նախնիքները ոուս թագավորների հետ եղել են ամուր բարեկամության և սիրո մեջ, իսկ ինքը, Մուսկովյան շահը՝ նախնիքներից ավելի է ցանկանում նորին ցարական մեծության հետ լինել անբախտելի բարեկամության մեջ»<sup>3</sup>

Այս նշանակում է, որ Լուսինիլովը կարողանում էր հետևողականորեն կենսագործել իր ծրագրերը: Կան լուրջ հիմքեր կարծելու, որ Լուսինիլովը բացի առևտրական գործերից կատարում էր Մոսկվայի լուրջ ու գաղտնի հանձնարարությունները, որոնց մասին նա ոչ միայն գրավոր տեղեկություններ չէր կարող տալ, այլև Գեսպանական պրեկազում անգամ չէր հայտնում: Այդ

<sup>1</sup> Նույն տեղում, ձ. 146—147:

<sup>2</sup> Նույն տեղում, ձ. 143:

<sup>3</sup> «Предки де ево шахова величества с русскими государи были в крепкой дружбе и любви, а он де Сулейман шах с ево царским величеством наипаче предков своих желает быть в неразорванном дружезлюбии». Նույն տեղում, ձ. 146:

կարգի վկայություն է հանդիսանում արձանագրությունների հետևյալ քաղվածքը. «Իսկ ինչ որ օկոչնիչի Ֆեդոր Յակովլևիչի Միրսլավսկու կողմից էր հրահանգված մի բանի մասին, այն ժամանակ նա չէր կարող այդ կատարել, իսկ այժմ, եթե ցարական մեծությունը կրարհանձի, որ այդ հայր ձեռնարկի այդ բանին, ապա նա այդ կկատարի: Իսկ թե ի՞նչ բան է այդ դրա մասին նա կհայտնի առաջիկայում»:<sup>1</sup>

Այս մերձեցումը և քաղաքական վստահությունն ու համադրծակցությունը դեռ իրավունք չեն տալիս ասելու, որ մոսկովյան կառավարության և հայ վաճառականության մեջ սահմանված էր լրակատար բարեկամություն և բացակայում էին հակասությունները: Երբ 1672 թվին Լուսիկովը Մոսկվայում Մատվեկի հետ զրուցում էր, վերջինս զժգոհություն հայտնեց, որ հայերն ու մասնավորապես Լուսիկովը իրենց հետ մետաքս չեն բերել Ռուսաստան, որ նրանք խախտում են ընկերության հետ կնքված պայմանագիրը և քաջքայնում ռուսական պետության գանձարանը: Լուսիկովն այս կապակցությամբ նրան տալիս է բազմիմաստ պատասխան. «Բրիտանոսը եկավ ոչ թե Մովսեսի օրենքը խախտելու, այլ այն կատարելու»:<sup>2</sup> Եվ միաժամանակ հարցրեց, թե ճիշտ է, արդյոք, որ մետաքսի վաճառքի մասին զրված պայմանագիրը փոփոխության է ենթարկվել:

1672 թվին Օրգին Նաշնոկինին կանցլերի պաշտոնում փոխարինեց Արամյան Սերգեևիչ Մատվեկը, որը հուլիս ամսին Դեսպանական պրիկազ է հրավիրում ռուս վաճառականների ընտրված մարդկանց, նրանց մոտ կարգում Հայկական ընկերության հետ կնքված պայմանագիրը ու հարցնում նրանց կարծիքն այդ առևտրի մասին: Ռուս վաճառականները մեաբերան բողոքում են, որ պայմանագիրը հայերին տալիս է մեծ իրավունքներ և ռուսներին զրկում մետաքսի և պարսկական մյուս ապրանքների վաճառքից ստացվող շահույթից: Նրանք շեշտում են, որ տրանզիտային առևտուրը ռուսներից խլում է ասիական ու եվրոպական առևտրի առաջնությունը: զրկում Ռուսաստանը ուկու ներմուծման հնարավորությունից և աղքատացնում գանձարանը:

1673 թվի մայիսի 21-ին Մատվեկը նորից կանչում է գոստերին (խոշոր վաճառականներ, հյուրեր) և հայտնում ցարի հրամանը ռուսների Աստրախանից պարսից և հայերի ռուսաց կողմնացնեին արգելելու մասին: Բայց շուտով հայերի տրանզիտային առևտրի իրավունքը ճանաչվում է, որը և պատճառ է դառնում ռուս վաճառականների նոր բողոքների: Կառավարությունը անպատասխան թողեց այդ բողոքները, եթե ի նկատի չունենանք հայերի արտոնությունների աննշան սահմանափակումը: Լուսիկովի հետ խորհրդակցելուց հետո Մատվեկը կարգավորում է Աստրախանից Մոսկվա չթողնել պարսիկ վաճառականներին, բացառություն անելով հայերի համար:<sup>3</sup> Մինչդեռ ռուս վաճառականները, դեմ լինելով օտարերկրյա կոնկուրենցիային, այս հարցում հավասարության նշան էին գնում բոլոր այլազգի վաճառականների մեջ, ռուս պետությունը, քաղաքական նկատառումներով, չէր դադարում նպաստել հայկական առևտրին: 1673 թվին Հայկական ընկերության հետ կնքված պայմանագիրը վերահաստատվեց հօդուս

<sup>1</sup> Նույն տեղում, Ն. 148:

<sup>2</sup> Соловьев—История России, т. XII, стр. 566. Издание „Общественной Пользы“.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 365—369:

Ռուսաստանի՝ որոշ ճշտումներից հետո և հայ-ուսական առևտուրը մտավ զարգացման նոր շրջան: 1673 թվին մեծ հանձնարարականներով Մոսկվա է գալիս պարսկ շահի դեսպան և հայկական ընկերության ներկայացուցիչ Լուսիկովը և նոյեմբերի 13-ին Դեսպանական պրիկազում հայտնում, որ իր հետ՝ ցարին բերել է հետևյալ փաստաթղթերը. 1. Սուլեյման շահի գրամատան, 2. Հայ կաթողիկոսի գրամատան, 3. Հայկական ընկերության 21 անվագների խնդրագիրը՝ նրանց կնիքներով (բիսկ Թնչ գործերի մասին, այդ նա չասաց), 4. Կաթողիկոսի թուղթը Դեսպանական պրիկազին ճում որ պետական գործերը վարելն է վերապահված: 5. Անտիոքի պատրիարք Մակարիի գրամատան օկոյունիչի Մատվեկին և 6. Լեհական դեսպանի վրացիներին գրված թուղթը, որը հանձնված է Լուսիկովին շահի ներկայությամբ:

Թե ինչքան էր Լուսիկովը մոտենում ուսական կառավարական շրջաններին, թե ինչքան մեծ վստահությամբ ու հեղինակությամբ է օգտվում նա Մոսկվայում, այդ երևում է նրա թյուրքերեն գրված խնդրագրից, որի ուսերեն թարգմանությունը պահված է դեսպանական պրիկազում: «Ես լսեցի, — գրում է նա, — որ Մոսկվա է եկել թյուրքական սուլթանի դեսպանը: Խնդրում եմ Ձեր բարությունը այդ ուղարկված դեսպանի գործերը գրավոր ուղարկել ինձ, քանի որ այն գործերը, որոնց մասին խոսված է ու վերաբերում է թյուրքերեյին, էթե աստված հաջողեցնի, այդ գործի վրա էլ պիտի աշխատեմ»<sup>1</sup>:

Պարզ է, որ Լուսիկովը հանդես է գալիս ոչ միայն որպես վաճառականական ընկերության և շահի ներկայացուցիչ, այլև որպես Դեսպանական պրիկազի վստահիչի խորհրդատու, որի գործունեությունը դուրս է գալիս ուս-պարսկական հարաբերությունների շրջանակներից:

Դեսպանական պրիկազի արձանագրություններից երևում է, որ նրան առաջնորդում են ցարի կալոմնայի պալատը գիտելու, ընդ որում Լուսիկովը հիացմունք է հայտնում ուս վարպետների կառուցած փայտաշեն պալատների մասին, որոնց նմանը նա չէր տեսել ողջ Եվրոպայում: Խմելով ցարի կենացը, նա իր բաժակաճառը վերջացնում է հայտնելով, որ «նորին ցարական մեծությունը ուզում է մատուցել ամեն տեսակի ծառայություն, որի մասին ցարի օկոյունիչի Արտամոն Սերգեևիչ Մատվեկի հետ խոսակցությունների ժամանակ ասել և հայտնել է և հույս ունի աստծո օգնությամբ էլ կկատարի, իսկ կատարելուց հետո, թողնելով բոլոր տեսակի ապրանքները, ժամանակից առաջ շտապ կվերադառնա, այդ բարի գործերի մասին նորին ցարական մեծությունը հայտնելու համար»<sup>2</sup>:

Ինչ բարի գործեր» էին դրանք, դժվար է ասել. մի բան միայն պարզ է, որ խոսքը շատ կարևոր գործի մասին էր, քանի որ նա խոստանում է

<sup>1</sup> «Слушая я, что турецкого салтана к Москве пришел посол, прошу Ваше милости, что того присланного посла дело прислать ко мне на письмо. потому что о которых делах говорено, и те мне будет надобно и к турецкому делу пристойт и аже даст бог о том деле буду работать». Там же, лист 497.

<sup>2</sup> «Всякое радение его царского величеству показати желает, о чем будучи на разговорах его царского величества окольному Артамону Сергеевичу Матвееву говорил и объявил и чае божею помощю и исполнит, а исполня и оставя всякие товары, наперед, для объявления тех добрых дел к его царского величеству приедет наскоро». Там же, л. 495.

այդ կատարելուց հետո թողնել տևտուրը և շուտ զալ կատարածի մասին Մոսկվայում հայտնելու համար: Թվում է, որ կարելի է ապացուցված համարել Լուսինովի ուսսական օրիննաացիայի քաղաքական գործիչ լինելը՝ Պարզ է նաև, որ Լուսինովը յարտահայտիչ էր պարսկահայ վաճառականության քաղաքական ձգտումների ու ծրագրերի:

Հայ-ուսսական մերձեցման օրնկտիվ նախադրյալների առկայութեան պայմաններում ակնանավոր վաճառականների անմիջական շփուժը ուսսական կառավարական շրջաններին ազդեցիկ զեմքերի և անգամ Ռոմանովների տան ներկայացուցիչներին հետ, անկասկած, նպաստում էր հայ-ուսսական կապերի զարգացմանը:

Հայ վաճառականները հաճախակի լինում էին թագավորի մոտ, մասնակցում դատիկ տոնակատարութեանը, ստանձնում ցարական տան դնումները կատարումը և այլն: Չաքարե Սահրատյանը 1673 թվին ցարին է ուղարկում չորս թամբածածկ՝ 5000 ուսսալու արժեքով, 3000 շարան մարգարիտ, 4 մեծ զորդ և բաղմաթիվ այլ ապրանքներ: Այդ ապրանքները մի մասը Մատվենն անձամբ հանձնում է Նատալիա Կիրիլովնային (Պետրոս Մեծի մորը), իսկ մյուս մասը Ռսկե պալատին, Արվեստական պալատին և գաղտնի գործերը պրեկտորին: Հայ վաճառականները մեծ քանակութեամբ ապրանքներ էին ծախում ցարական իշխաններին՝ Մատվենին, Գոլյցինին, Տրախանիտովին և մյուսներին: Ստեփան Ռոմոզովսկին ապրում էր Գոլցինի տան զիմաց Տվերսկայա փողոցի վրա Տրախանիտովի տանը, ընդ որում նրա պաշտպանութեան համար պրեստավ էր նշանակվում: Հայ վաճառականութեան նշանակութեան մասին պատկերացում են տալիս նրա կատարած տևտորի ծավալը բնորոշող մի քանի թվեր: 1675 թվին լեհական և Շամախիի դեսպանների հետ Մոսկվա են գալիս հայ վաճառականներ, որոնց տարած ապրանքները միտանել արժեքը կազմում էր 50 հազար ուսսալի, մի դուժար, որը հավասար էր Մոսկվայի մի տարվա առևտրական շրջանառութեանը: Նույն 1675 թվին Յաղուբ Պոդասովը ընկերների հետ միասին Մոսկվա է բերում 1000 փութ մետաքս, 30 հազար ուսսալու արժույթությամբ, բաղմաթիվ այլ ապրանքներ, որոնց թվում նաև զխտոր (Черный опек): 1684 թվին Յաղուբ Գրիգորը Պարսկաստան ուղարկելու համար Մոսկվայից դնում է 1400 փութ կարմիր կաշի, Արխանգելսկից տանում է 5000 արշին մանուգ, 66 հազար հատ բուլակիա, 252 հազար սանդ և այլ ապրանքներ: Նույն թվին Դավիթ Բագրամովը Մոսկվայից Պարսկաստան է ուղարկում 5143 արշին մանուգ, դեղորայք, ակնոցներ, ուսսական քանդակներ, որոնց թվում նաև 50 դիրք: Ստեփան Սաֆարովը Նիքոպոլից բերում է 33608 ուսսալու ապրանք: Հետագրքրականն այն է, որ Հայկական ընկերութեան պայմանագրով արված արտոնութեաններից օգտվում էին ոչ միայն Ղուղայիցիք, այլև մյուս վաճառականները: Պարզ է, որ տնտեսական շահագրգռվածութունը և քաղաքական հաշիվները պետք է մոտեցնեն կողմերին ու ամբացնեն կապը:

Մարզիան ու Թավադավովը, Լուսինովն ու Ռոմոզովսկին եղակիները չէին, որ արտահայտում էին իրենց ուսսասիրական արամադրութունները և աջակցում Մոսկովյան պետութեանը: 1675 թվին Դեսպանական պրեկա-

գում արձանագրված են հայ վաճառականներ Չաքար Յակովլիևի և Իվան Մակարովի ցուցմունքներն այն մասին, որ շահը նրկու տարուց ավելի է իրենց անհայտ պատճառներով ապրում է Կաղբխում, որ Պարսկաստանը ոչ մի նրկրի հետ չի պատերազմում և որ ռուս դեսպան Միչեցկին նրանց հանդիպել է Շամախում հինգ ամիս առաջ և այլև: 1687 թվին արձանագրված են Քորսու Բուզունովի և մյուսների ցուցմունքները, ըստ որոնց Ռուսաստանի դեսպան Սրիստաֆորովը շահի մոտ է և վերադառնալու է Պարսկաստանի մեծ դեսպանութան հետ և որ դեսպանութունը կազմված է լինելու 700 հոգուց<sup>1</sup> Այս արձանագրութիւնները ցույց են տալիս, որ հայ վաճառականները օգտագործվում էին ռուսական հետախուզութան կողմից: Ռուսաստանի և նրա քաղաքականութան նկատմամբ անտարբեր չէին նաև Ռուսաստանի հետ կապ չունեցող վաճառականները: Այսպես՝ Չաքարիա Աղուլեցին իր օրագրութան մեջ նշում է, որ 1678 թվի ապրիլին սուլթան Մահմեդ IV-ը մեծ զորքով դնաց Ադրիանապոլիս և այնտեղից պատրաստվում է գնալ Մոսկվայի վրա: Բայց մոսկովները, լեհերը և արեջանները մեծ ճակատամարտ տվին, որտեղ Չարդվեց օսմանական բանակից 185 հազար մարդ և սուլթանը սպարդյուն վերադարձավ Ադրիանապոլիս, Եօսմանցիք այսպես Պաց խայտառակ<sup>2</sup> ոչ առանց գոհունակութան նշում է Աղուլեցին:

Հայ վաճառականութունը պետք է հակվեր դեպի Ռուսաստան քանի որ նա այնտեղ կդտներ առևտրական գործունեութան լայն հնարավորութիւն, հարուստ ու մեծ շուկա, հաստատ պետական կարգ ու կանոն, Եվրոպայի և Ասիայի շուկաների մեջ կապ ստեղծելու լավագույն ուղիներ, որոնք կօգնեին դիմադրելու Պարսկաստանում և թյուրքիայում օրըստօրի ուժեղացող արևմտա-եվրոպական առևտրական կապիտալի ճնշմանն ու մըրցութանը (բավական է հիշել 1656 թվի Կրոմվելի հաստատ նավիգացիոն ակտը և մյուս ձեռնարկումները): Ռուսաստանում չկային կրոնական և ազգային ճնշման բարբարոս ձևերը, թալանի ու տեսորի թյուրք-պարսկական ուժեղում: Ինչպես Ինչեյան է գրում, «Թյուրքիան, Ինչպես և արևելյան ամեն ստեպակի այլ սիրապետութիւն, անհամատեղելի էր կապիտալիստական կարգի հետ: Հավելյալ արժեքի ստացումը ոչնչով չի ապահովված սատրապներին ու փաշաների դիշտտիչ ձեռքերից: Բացակայում է բուրժուական ձեռքբերման հիմնական պայմանը, վաճառականի անձի ու նրա սեփականութան ապահովութիւնը»<sup>3</sup>:

Հայ վաճառականները, որոնք կապված էին ամբողջ աշխարհի հետ, լավ տեղյակ էին տնտեսական ու քաղաքական խոշոր իրադարձութիւններին ու լավ հասկանում էին ուժերի փոխհարաբերութեան փոփոխութիւնն ի վրա Արևելքի՝ Պարսկաստանի և Թյուրքիայի Թյուրքիայի հզորութեան աստիճանական անկումը և նրա ներքին քայքայումը պարզ էր դառնում նաժանանդ Ստախնայի (11 նոյեմբերի 1673 թ.), Լվովի և մի շարք այլ ճակատամարտերում նրա կրած պարտութիւնների ֆոնի վրա: Մարքսը նշում է, որ Յան Սորեսկու հաղթանակից չէ, որ սկսվում է Թյուրքիայի

<sup>1</sup> ЦГАДА, Арм. дела, 1687 г., № 1, л. 2.

<sup>2</sup> Չաքարիա Աղուլեցու օրագրութիւնը, էջ 106:

<sup>3</sup> К Маркс и Фр. Энгельс. Социализм, том XVI, ч. II, стр. 22.



անկումը: «Թյուրքական կայսրությունը,— գրում է Մարքսը,— այդ ժամանակ արդեն գտնվում էր քայքայման պրոցեսի մեջ... օսմանական հզորությունը ու մեծությունը արագ անկումը սկսվել էր դեռ ավելի առաջ»<sup>1</sup>

Հետևողականորեն թուլացող Պարսկաստանի ու թյուրքականի կողքին հայերը տեսնում էին օրըսօրի ամող ու զորեղացող Ռուսաստանը:

Չարմացած եվրոպան—գրում է Մարքսը,—որ Իվան III-ի իշխանության սկզբում նույնիսկ հաղիվ էր նկատում կիսվայի ու թաթարների միջև սեղմված Մոսկովիայի զոյությունը, շուտով էր իր արևելյան սահմանների վրա հսկայական պետության անսպասելի հանդես գալու հետևանքով:<sup>2</sup>

Այս բոլորը պետք է Ռուսաստանի վրա հրավիրեր ոչ միայն վաճառականության, այլև ազնվականության ու եկեղեցու ուշադրությունը, քանի որ հայ հողատիրությունը ձգտում էր վերականգնել իր ուժն ու իրավաստեանական արտոնությունները, ամբապնդել ազդեցությունը հայ ժողովրդի մեջ, ստեղծելով ավելի մեծ ինքնուրույնության զբաղվածություն: Պատահական չէ, որ Էջմիածինը մուսուլմանության և կաթոլիկության դեմ մղված ծանր պայքարում իր հայացքը հառում էր դեպի Ռուսաստանը: Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին (1665—1680 թ. թ.), ոչ միայն նպաստում էր հայ-ուսական առևտրի զարգացմանն ու կապ պահպանում ցարի և նրա Դեսպանական պրեկզիտ հետ, այլև դիմում էր Ռուսաստանի օգնությանը՝ հայերի դրությունը բարելավելու համար:

Ջուղայեցու հայտնի նամակը, որի լատիներեն տեքստը հրատարակված է «Արարատ» ամսագրում 1915 թվին, ոչ միայն հայ-ուսական քաղաքական հարաբերություններն արտահայտող փաստաթուղթ է, այլև վիպարություն է ուսական օրինատեղիայի ստեղծման պրոցեսի ուժեղացման: Պարզ է, որ դա ցարին ուղղված միակ նամակը չէր: Պարզ է նաև, որ նրա նշանակությունը ավելի մեծ է, քան մինչև այժմ նշված է մեր գրականության մեջ (Թեկուզ և այդ նամակը չէ, որ պետք է համարվի հայ-ուսական կապերն արտահայտող առաջին փաստաթուղթը):

Ջուղայեցու նամակը իրավունք է տալիս եզրակացնելու, որ Էջմիածինը յուրջ ակնկալություններ ուներ և մեծ հույսեր էր կապում Մոսկովայի հետ: Այս մասին է խոսում նամակի հետևյալ համաժառ. «Եվ ինչպես մոսկովյան Ռուսաստանի բոլոր ամենազոր կայսրերը միշտ հանդիսացել են պաշտպան և զորավիգ հավատի, այլև թշնամիների բռնության հանդեպ հովանի ճնշվածներին, նույնպես և վայել է նորին մեծությունը, այդ իսկ հերոսներին հաջորդին՝ թե կյանքում և թե դա՛նի վրա օգնության հասնել մեզ խեղճերիս»:<sup>3</sup>

Ջուղայեցու նամակը չի արժեքազրկվում այն բանով, որ նա աղբյուրում է ցարին իր դեսպանների միջոցով բարելավել հայերի վիճակը: Անբեռնում հիշվեց, որ Ռուսաստանը այդ ժամանակ Պարսկաստանի դեմ պատերազմի ոչ մի նպատակ չուներ և եթե անգամ ունենար էլ, Ջուղայեցին այդ մասին չէր կարող պարզ գրել իր նամակում (Թեպետ Ռուսաստանի հետ

<sup>1</sup> К. Маркс и Фр. Энгельс—Сочинения, том X, стр.61.

<sup>2</sup> К. Маркс. Секретная дипломатия XVIII века, цитируется по тому Истории дипломатии, стр. 197.

<sup>3</sup> Ա. Հովհաննիսյան— Հայեր Ջուղայեցու մի գրությունը ուս պրոցեսին, «Արարատ», 1915 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 775—781:

նույնիսկ այդ կարգի հույսեր կապելն էլ արգեն արտահայտություն է Ռուսական օրիննացիայի ստեղծման)։

Եթե դիվանադիտական ազդեցությամբ հայերի զրուխյունը բարելավելը չի կարելի դիտել որպես քաղաքական կապերի առկայություն, ապա այդ գեպում Իսրայել Օրու ղեկավանության ժամանակ Պետրոս Մեծի նույնատիպ պահանջը նույնպես չպետք է դիտել որպես քաղաքական ակա (ինչպես հայտնի է, իր դիմումի մեջ Պետրոսը շահին զրուս էր. «զր քրիստոնյա հպատակների վրա դուք ունենաք»)։

Հակոբ Ջուղայեցու ակտիվ մասնակցությունը հայ պատագրության գործին ունիթորական պատմագրության կողմից սովորի տակ է թողնվել և որպես նրա ծառայություն առաջ է քաշվել կաթողիկոսի այսպես կոչված կաթողիկոսացի մասնակցության պատմությունը, որը շատ կասկածելի է ու կարոտ ուսումնասիրության։ Թվում է, որ այս լեզունդը հենվել է միայն այն քաղաքականության վրա, որով Հայոց Ջուղայեցին հետևողականորեն ձգտում էր թուրքացիները հայության կրոնական պառակտումը և վերացնել հակամարտությունները։ Չաճյանը իր պատմության 3-րդ հատորում Ջուղայեցու մասին գրում է. «Ոչ գաղարէր Յակոբ կաթողիկոս դրել ստեպ ստեպ դիր և նամակ օրհնութեան ի կողմանս կողման ընդ ամենայն սեղիս, ազաչելով դամենին ժի կրիին դուռն բանալ երկպառակութեան»։<sup>2</sup>

Չաճյանը կարծում է, որ 1679 թվին Ջուղայեցու կոտանդնուպոլիս գնալու նպատակը երկպառակության վերացումն էր նա պատմում է, որ կաթողիկոսը օգոստոսի մեկին ճաշկերույթից հետո իրեն վատ է զգում և օգոստոսի 2-ին մեռնում՝ միայն մեկ օր առաջ կաթողիկոսությունն ընդունած լինելով։ Ճարտրինակ է այս մահը, իսկ մկրտությունը թվում է կամ կեղծիք, կամ դառանցանք հոգևորքի մեջ։ Անհավատալի է կաթողիկոսի այնքան մոլի կաթողիկ դարձած լինելը, երբ մահվան մահձում նա պիտի շատապեր ուղղել իր 80-ամյա կյանքի «սխալը» և կամ հոգևորքի մեջ առաջնորդվել ինչ-որ անհասկանալի հաշիվներով ու նկատառումներով։ Ջուղայեցին չէր կարող չհասկանալ, որ մահվան նախօրյակին նրա կաթողիկոսացումը չէր կարող որևէ ունալ գեր խաղալ։ Եթե ընդունենք, որ Ջուղայեցին այդքան բան չէր կարող մտածել հիվանդ վիճակում, ապա զբանով ընդունած կլինենք, որ նա իր դետակցական կյանքը ի սպաս է դրել էջմիրածնի, և ոչ վատիկոսի շահերին։ Թվում է, որ մեր պատմաբանները շատ ակնի նս դատահել կաթողիկ միսիոնարներին, քան այդ կարելի էր։ Հայ և օտար կաթողիկ պրոպագանդիստները մեղա ձգտել են իրենց հաթողիկոսներով պակակելու համար չսփազանցնել և անդամ զբարտության գնով վառ գույններով ներկայացնել հայերի մեջ եղած կաթողիկոսացի մեղաբանությունը։ Պալճյանը է «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան» մեջ ուղղում է ստեղծել պատրանք, որ իբր բազմաթիվ կաթողիկոսներ ու եպիսկոպոսներ ընդունում էին ունիթորությունը։ Նա պնդում է, որ Հակոբ կաթողիկոսը ղեկն յոթ տարի առաջ «նման դավանություն մըն ալ տված էր»։ Պալճյանը չի հասկացել, որ զբանով նա կասկածի տակ է դրել նաև պապին տված երկ-

<sup>1</sup> Հ. Անալյան—Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին, Երևան, 1927 թիվ, էջ 91, պատմագրության ակադեմիայի։

<sup>2</sup> Մ. Չաճյան—Պատմություն հայոց, հատոր 3-րդ, էջ 703.

ըորդ դավանութեան վավերականութեանը: Եթե Զուգայեցին դեռևս 71 թվին այդպիսի փաստաթուղթ տար Վատիկանի ձեռքը, ապա միսիոնարները այդ մասին կազազակներն աշխարհով մեկ՝ այն դարձնելով պրոպագանդայի նոր և հզոր զենք հայ լուսավորչական եկեղեցու դեմ: Բայց որքան հայտնի է, ըլլոր ժամանակակիցները նշելով Զուգայեցու շինարարական, ազատագրական և այլ ձգտումների փասին, լրում են կաթոլիկացման վերաբերյալ: Մինչդեռ Պալճյանը գրում է. «Աստվածաշնորհ հայրապետին մահվանն ենթադրել իր ուղղափառ հավատո և սրբութեան համբավը համազգաց մեջ առավել ևս տարածվեցավ, և ցայսօր կը բռնի իր ժամանակակիցները անմիջապես հոյակապ շիրիմ կանգնեցին»<sup>1</sup>: Բայց այս էլ քեզ է թվում Պալճյանին: Խոսելով բազմաթիվ հայերի դավանափոխութեան մասին, նա գրում է. «Կոստանդնուպոլսի պատրիարքները ամենևին չզանդակեցին իրենց հավատո հայտարարութեանը հումա քահանայապետին առջև դնելու...» և իր պաթետիկ խոսքը վերջացնում է՝ «ինչ գեղեցիկ տեսարան»<sup>2</sup>:

Հայտնի է, որ բոլոր հայկական աղբյուրները Զուգայեցու մասին միայն դրական վերաբերումներ են տալիս: Գավրիթեցին խոսում է նրա մասին որպես շինարարի (էջ 341, 353), Զաքարիա Սարկավազը նշում է, որ նա «եկեղբն արբար բարեգործութեան»<sup>3</sup>: Գրեգոր Կարանաղեցին և Զաքարիա Ապուլեցին նույնպես ոչ մի բացասական արտահայտություն չունեն նրա մասին, իսկ Էջմիածնի նեոազգա պատմագիրները՝ Սիմեոն կաթողիկոսը և Պաշտուր Զուգայեցին բարձրացնում են նրան որպես «երաշարի անձ», «երեշտակային վարդապետ»՝ «բաղմահանձար»<sup>4</sup> և այլն: Այս բոլորը, իհարկե, չի նշանակում, թե Հակոբ Զուգայեցին ֆանատիկ լուսավորչական էր: Հակոբ կաթողիկոսը կողմնակից էր կաթոլիկները ու լուսավորչականների համադործակցութեան: Նա անհրաժեշտ էր համարում առաջին հերթին միավորել ուժերը Վրաստանի և Ռուսաստանի հետ՝ մոսուլմանութեան դեմ մղված պայքարում: Այսպիսի համադործակցութեանը ընձվ չի նշանակում հրաժարումն ինքնուրույն կրոնական ու ազգային գոյությունից: Ինչպես նշվել է, թյուրքիայի դեմ միասնական ճակատ կազմելու գաղափարը ոչ նոր էր և ոչ էլ հայկական: Այդ միջոցին հայերը պետք է դիմեն ուրիշների օրինակին, մասնավորապես այն պատճառով, որ թյուրքիան էր Արևելքում հայութեանը սպառնացող հիմնական վտանգը: Զուգայեցին կարծում էր նաև, որ եվրոպական պետությունների մասնակցութեանը թյուրքիայի դեմ կաղմակերպվող պայքարին մեծապես կօգնեք Ռուսաստանի ակտիվութեանը: Ռեալիզմի վերջին արժանի է նաև այն, որ եվրոպայի ազատարար միսիոնարները ստեղծված պատարանքի աղբյուրները հեռավորականորեն թուլանում էր, մինչդեռ հայերը ու վրացիները ուսուսական օրինատացիայի հիմքերը նույնքան հետևողականորեն ամրանում էին:

Ինչու 1548 թվին Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը մեկնում է Եվրոպա, Հռոմում և արևմտա-եվրոպական արքունիքներում հայերի համար օգնություն հայցելու նպատակով: Ազգա եվրոպայի ճանապարհն է

<sup>1</sup> Պալճյան — Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս և միւթիւն նոցա ընդ համէական եկեղեցւոյ, Վիեննա, 1878, էջ 163—164:

<sup>2</sup> Կոստանդնուպոլս, էջ 166:

<sup>3</sup> Հակարիա Յարկավազ — Պատմութեան, հատոր 2-րդ, էջ 60:

<sup>4</sup> Պաշտուր Զուգայեցի — Պատմութիւն Պարսից, էջ 117, 141, 149:

բռնում Միրաչի Սեբաստացին, որը սակայն մնում է Սեբաստիայում և 1562 թվին Աբգար Դպրի ղեկավարությամբ մի պատգամավորություն է ուղարկում պապին<sup>1</sup>

Սրան միաժամանակ վրաց իշխան Սիմեոնը էր հայ դեսպանի միջոցով դիմում է ռուսական ցար Իվան IV-ին: Այս մասին Ջենկինսոնը գրում է. «Շամասի գտնված միջոցին ինչ եկավ Վրաստանի թագավորի կողմից մի հայ և հայտարարեց այդ թագավորի ողբալի կացությունը, որ փակված լինելով այս երկու անգույթ բռնավորներին և զորավոր իշխաններին միջև — հիշյալ մեծ թուրքը և Սոֆին—ինքը հարատև պատերազմի մեջ է պնդում նրանց դեմ, պահանջելով որ... հիշյալ հայի հետ մխիթարանք ուղարկել իրեն թե ինչպես պիտի նա կարողանա իր ղեկավարն ուղարկել Ռուսաստանի հեղյու կայսեր, և թե ինչ է իմ կարծիքը, նա պիտի օգնե իրեն թե ոչ»<sup>2</sup> Հետաքրքիրն այն է, որ Ջենկինսոնը խորհուրդ է առաջ դիմել ցարին Հյուսիսային Կովկասի իշխանի միջոցով (Տեներուկի), որի աղջիկը՝ Մարիան Իվան IV-ի երկրորդ կինն էր: Չնայած սրան Սիմեոն իշխանը ինչպես և հայերը միաժամանակ դիմում էին նաև Հռոմի Պապին: Դիմելու անմիջական պատճառը վրաց իշխան Սիմեոնի պարտությունն էր, երբ 1575 թվին թյուրքերն ավերեցին Երևանը և ջախջախեցին Պարսից զորքերը: Ռուսաստանը ի վիճակի չէր այդ ժամանակ օգնելու Անդրկովկասին: Քյուրայանը իր հողվածու ընդուն է պարսից Շահ Աբասի և Կախեթիայի Լևոն իշխանի նամակը Իսպանական թագավոր Ֆրիսկո Ա-ին, որը, և մեջի այլոց, գրված է հայերեն և վերջանում է այսպես. «Գրեցաւ թուղթս յերկիրն Կուրծնստանի ի թագաւորանիսա քաղաքն Տփլիս, ի թիվն հայոց Ռեմ (1596). օգոստոս ամսո ժի (14)»<sup>3</sup>

Նույն թվերին վրաց իշխանը դիմում է նաև Ռուսաստանի օգնությունը: Այսպիսով Եվրոպային դիմող հայերը և վրացիները հավասարապես և միաժամանակ դիմում էին նաև Ռուսաստանին, նրա հետ կապելով ավելի ուղջ հույսեր:

Ուշագրավ է բախտակից հայ ու վրաց ժողովուրդների դիմումները զուգադիպությամբ: Լեոն արգարացի նշում է, որ հայերը իրենց ազատագրական բայերն սկսեցին վրացիների հետ: Դավրիժեցին ու Մարեցին, ինչպես և մյուս պատմիչները, մեծ կարեկցությունը են խոսում Վրաստանին հասնող փորձություններին մասին և ուրախանում նրա հաջողություններով<sup>4</sup> Երբ պարսիկները Դավրիժ իշխանի գլուխը կտրեցին, «քաղաքս պարսից ցրն՝ ծուխեամբ խրախուսութեան աննէին և քրիստոնէիցն էր մեծ սուգ և աղբամութիւն»՝ զի քրիստոնէից թագաւորութիւնն անկաւ»<sup>5</sup> Դավրիժեցու գրքում հոգնակալությամբ նշվում է այն փաստը, որ 1661 թվին Կովկաս լեռան բնակվող վրացիք՝ աղզն որ ասի թուրք, և Փշաւ եկին ի վրէշերի և զայս ՌՇ

<sup>1</sup> Բյարայան—Հայ պատմագրական փերձ մը ժՁ դարուն, «Ասահա», Փարիզ, 1937 թ., № 5—6:

<sup>2</sup> Ուղեգրությունները, հատոր 1-ին, էջ 390:

<sup>3</sup> Գյուրայան, նշված աշխատությունը, էջ 397:

<sup>4</sup> Լեո—Հայոց պատմություն, հատոր 3-րդ, էջ 347:

<sup>5</sup> Ա. Դավրիժեցի, էջ 95—96, 98—99, 102—103 և այլն և այլն:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 445:

տուն թուրքս (1500 տուն պարսիկներին: Վ. Ո.) ի սուր քաշեցին»...<sup>1</sup> Ինչպես այդ փոխադարձ կարեկցությունը, գործակցությունը, այնպես էլ իրենց բարիքը Ռուսաստանին կապելու ձգտումը ավելի ամրապնդվում ու պարզ է արտահայտվում 17-րդ դարի 2-րդ կեսից, մինչդեռ եվրոպայի նկատմամբ եղած հավատը գնալով կորցնում է իր ազդեցությունը: Ինչպես ճիշտ նշում է Քյուրտյանը, «... վրաց ու հայոց եվրոպայի ունեցած հավատքը, միամիտ տղայական համոզումը եթե իսկպպես պատարակելի է, այլ ավելի պատարակելի է եվրոպայի աշխարհական և կրոնական վեհապետությունց շնական երկերեսությունը: Դեռ ասոնց արդյունքն է, որ կվայելինք ցարդ, գրեթե 400 տարի վերջը»:<sup>2</sup>

Եվրոպայի, Ռուսաստանի և Ասիայի հետ ազգային անտրական և կրոնական կապերով հարգարգահից հայերը սկսում են հասկանալ, հրապարակել և աստիճանաբար հրաժարվել եվրոպական օրինադրությանից և բռնկվում քաղաքականությունից: Դրան ասոնց արդյունքն է, որ միասին իրենց բարձր կապելով Ռուսաստանի հետ:

Լեոն բերում է վրաց տարեգրություն մի արժեքավոր հիշատակություն, բայց որի Գանձասարի կաթողիկոսը կիսում է թեյմուրազ 1-ին (1629—1634), առջարկելով հայերի օգնությունը 40 հազարանոց բանակով գնալ Ատրպատականի վրա և նվաճել այն»:<sup>3</sup>

Այս ծրագրի ստեղծման հնարավորությունը հասկանալի կլինի, եթե հիշենք նաև այն, որ մերձկապոլյան շրջանները Ռուսաստանին միացնելու նույն ժամանակներում մշակված ծրագրերը նույնպես նախատեսում էր Աղբյուրյանի հայություն պատամբություն միջոցով սուսներին օգնություն գնալու գաղափարը:

Այս պլանների հիմքերը ոչ միայն չէին ոչնչանում, այլև ամրապնդում էին, քանի որ Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն էլ գնալով ավելի պարզորոշ ու հեռանդական էր դառնում, մինչդեռ եվրոպան, զգալով Քյուրտյանի անկումը, պետք է աստիճանաբար փոխեր իր քաղաքականությունը և կանգնեցր այդ «հիվանդ մարդու» պաշտպանություն և նրա հետ գաղութային առևտուր սկսելու ճանապարհի վրա:

Եթե մի քանակական կայսր Լուդովիկոս Վ-ը դեռևս 1660-ական թվականներին աղմկում էր խաչակրություն մասին, իսկ 1669 թվին սահմանափակվում Քյուրտյանի դեմ Վենետիկին ցույց տրված մասնակի օգնությունը, ապա 1673 թվին խաղաղ ճանապարհով ձեռնառու առևտրական պայմանագիր կնքելուց հետո, նա վերջնականապես հրաժարվեց պատերազմի ֆանտաստիկ ծրագրերից: Ճշեռզնտե խաչակրություն միտքը ետ մնաց իբրև երեսասարդ հասակի ցնորք և Լյուդի Գ-ն մտավ ֆրանսիական քաղաքականություն հունք, այսինքն՝ բարեկամացավ Քյուրտյանի նկատմամբ:<sup>4</sup>

Իսկ այ խնդրես Լուդովիկոս Վ-ը, այնպես էլ պապն ու մյուս թագավորները գեղես հաժառուրեն շարունակում էին խաչակրություն և Աքե-վելի քրիստոնեություն պատագրման մասին տարբող պրոպագանդան:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 648:

<sup>2</sup> Քյուրտյան, նշված աշխատությունը, էջ 68:

<sup>3</sup> Լեո, նույն տեղում, էջ 498—499:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 343:

Սահեան այդ պրոպագանդան չէր կարող ամենազոր լինել, և իսկապես, թե՛ սպասելիքներ կարող էին ունենալ հայերը հետապնդելով Եվրոպայից, բացի կրօնական պառակտման ու հակամարտութեան հետագա խորացումից, ազգային ու կրօնական ճնշումների նոր ափսոսանքից: Հայերը չէին կարող չտեսնել, որ Լուզովիկոս XIV-ի պահանջը՝ կաթոլիկութիւնն ընդունող հայերին, նրանց ազգականների միակ ժառանգը դարձնելու մասին, ոչնչով չէր տարբերվում թյուրք-պարսկական լուսադատութեան վատթարագույն ձևերից: Հայերը հասկանում էին, որ Տրանսիան առաջնորդվում է իր առևտրական, քաղաքական և կրօնական շահերով միայն:

Բայց, իհարկե, չի կարելի թերազնահատել կաթոլիկական-ուղիթորական պրոպագանդայի անկասկած ուժը, որը ներգործում էր համառոտին, ամենուրեք և մեթոդիկ կերպով: Այդ ստեղծում էր նոր ու նոր պատրանքներ հայերի համար, որոնք հեծում էին շահի ու սուլթանի օրըստօրի ծախրացող լծի տակ: Այստեղ էլ պետք է փնտրել Ջուղայիցու և մյուս գործիչների դիմումները նաև Եվրոպային: Բայց, ինչպես ասվեց, այդ բոլորը չպետք է դիտել որպէս կաթոլիկական կամ եվրոպական օրինատացիա, նաժանյալանդ որ շատ կասկածելի են այդ ուղղութեամբ գրված բազմաթիվ գործերը ուղիթորութեան հանդուրժումների և եվրոպական օրինատացիայի ուժի մասին: Նույնքան երկբայական է Ջուղայիցու կաթոլիկութեան վերստին: Լեոն կարծես երկմտում է, կասկածում ու չի ուզում հավատալ ճիշդիտներին, որոնք միշտ ուսեցնում էին իրենց հանդուրժումները՝ «կաթոլիկ կղերը, — գրում է Լեոն, — նրան համարում էին իրենց դավանակիցը: Եղվիտները մահվան անկողնում պառկած ծերունուն սատրագրել արին մի թուղթ, որի մեջ դաժանում էր պապական ուղղափառութիւնը: Բայց հայ ժողովուրդը, որ այդպիսի թուղթ չէր տվել Հռոմին, պատվեց նրան ամենաբարձր նվիրական հասկացողութեամբ՝ հրաշագործ սրբի կոչումով... և ժողովրդի այն սրբաւորը պաշտամունքի մեջ անկասկած փոքր դեր չէր կատարել այն հմայքը, որ բազմաշարժար հայութեանը ներշնչում էր Հակոբի սկսած ազատագրական գործը»<sup>1</sup>:

Լեոն բերում է նաև մի շատ հետաքրքրական վկայութիւն Ռիկոյի հայ եկեղեցու պատմութեանը նվիրված աշխատութիւնից, որը կասկածի տակ է գնում նրա կաթոլիկ լինելու վերստին: «1678 թ., գրում է Ռիկոն, երբ ևս Ջուղուսիայից Անգլիա գնալու համար ընկեցի Հռոմի և Իտալիայի հանապարհը, շուրջ էր տարածված ամբողջ եկեղեցական պետութեան մեջ, թե հայոց ստալին պատրիարքը իր մի քանի միտրոպոլիտների ուղեկցութեամբ շուտով գնալու է Լոսն օլապին հնազանդվելու համար: Այսուհետև ևս մի քանի ամիս մնացի Իտալիայում, բայց այնտեղ այդ պատգամավորութեան մտաեհնալու մասին ոչ մի լուր չստացվեց, ուստի այն ժամանակից ևս եկել եմ այն եզրակացութեան, որ հայոց պատրիարքը նույնքան հեռու էր մի որեէ օտար եկեղեցու հպատակվելու գիտափորութիւնից, որքան Հայաստանը հեռու է հռոմեական կրօնի աթոռից»<sup>2</sup>:

Տարօրինակ է, որ Լեոն իր բերած հատվածից ոչ մի կարակացութիւն չի անում, չի քննադատում Պալճյանի սխալ ու միտումնաւոր հայտարար-

<sup>1</sup> Լեո, էջ 348:

<sup>2</sup> Նույն տեղում:

րությունները, չնկատելով անգամ, որ Պարսկանը փորձելով կաթողիկոսին ցույց տալ որպես տաբիների կաթողիկ, ըստ էության հակասում է իրեն ու ներքում Ջուղայեցու կաթողիկոսությունը: Լեոն անուշադրությամբ է անցնում նաև Հակոբ Ջուղայեցու նկատմամբ Շարգենի ունեցած բացասական վերաբերմունքի կողքով:

Թվում է, որ բոլոր հիմքերը կան պնդելու, թե Ջուղայեցին, ինչպես և հայ եկեղեցին ընդհանրապես, 17-րդ դարի վերջերում ավելի հակված էր դեպի Ռուսաստանը, քան դեպի Եվրոպա, թեպետ մի կողմից կաթողիկական գրականությունը և մյուս կողմից փաստերի սահմանափակությունն ու նրանց անբավարար ուսումնասիրությունը հետազոտողներին բերել են հակառակ եզրակացություն:

Հայ հոգևորականությունը և մասնավորապես Ջուղայեցին դասային (ինչպես և ազգային ու կրոնական) նկատառումներով պետք է որ լուրջ ակնկալություններ ունենային Ռուսաստանից: Եթե հայ վաճառականության, եկեղեցու և մեկրքների քաղաքական համակրությունը և հայ աշխատավորությունը ազատագրական ձգտումները չէին ձևավորվում ու պարզ արտահայտվում որպես ռուսական ընդհանուր օրինաացիա, այս դա բացատրվում է ոչ թե նրա բացակայությամբ, այլ իշխող և շահագործվող դասակարգերի ներքին հակասություններով ու պայքարով: Հայ վաճառականությունը չէր կարող միասնություն կազմել, քանի որ նրա անջատ խմբերը կապված էին տարբեր երկրների հետ և փոխադարձ պայքարի ու մրցության պայմաններում տարբեր ձգտումներ ունեին:

Հայ եկեղեցին և հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալները ավելի մտահոգված էին իրենց նեղ, անձնական շահերով, հարստվում էին իշխող կարգերին, պարտիկ ու թուրք խաներից ու փաշաներից ստանալով իշխանական իրավունքներ, արտոնություններ: Նրանք հաճախ հանդես էին գալիս միմյանց դեմ, կամ միանում թուրք ու պարսիկ իշխողների հետ՝ աշխատավորությանը շահագործելու և հնազանդ պահելու նպատակով: Բայց հայ հոգևոր և աշխարհիկ վերահստավերը, անգամ այդ իմաստով ավելի մեծ հույսեր կարող էին կապել Ռուսաստանի տիրապետության հետ, քան Պարսկաստանի կամ Թյուրքիայի: Բնական է, որ այս պայմաններում պարզ արտահայտված համազգային ռուսական օրինաացիա լինել չէր կարող, քանի որ Թյուրքիայի և Պարսկաստանի լծի տակ ձնված, ծայր կարիքի մեջ տառապող, անկազմակերպ աշխատավորությունը, անվստահությամբ լցված դեպի սպիկար ու շահախնդիր տիրող դասը, ի վիճակի չէր արտահայտել իր կամքն ու ձևավորել իր քաղաքական ծրագիրը:

Բնութագրելով ֆեոդալական վրաստանի վիճակը, ընկեր Ստալինը գրում է. «Իշխանությունների վաղանցիկ ու պատահական միավորումը, որ երբեմն հաջողվում էր կատարել օրեկ հաջողակ թագավորի, լավագույն դեպքում ընդգրկում էր միայն մակերեսային-վարչական ոլորտը և արագորեն քայքայվում էր՝ զարնվելով իշխանների քմահաճոյքներին ու գյուղացիների անտարբերությունը»<sup>1</sup>:

Սյուպիսի պայմաններում ոչ միայն չէր կարող լինել համաժողովրդական ու միասնական ազատագրական ծրագիր, այլև չէր էլ կարող արտահայտվել թեկուզ և արմատացած ռուսական օրինաացիան:

<sup>1</sup> Ի. Վ. Ստալին - Երևի, Երևան, 1947 թ., հատոր II, էջ 345.

Ռուսական օրինատացիան ցայտուն կերպով արտահայտվեց 1720-ական թվականներին ոչ թե այն պատճառով, որ այն ստեղծվում էր պատճառական այդ իրադրութեան հետևանքով, այլ միայն այն պատճառով, որ օրինատացիան ստեղծված էր և ուսական զորքերի Անդրկովկաս մասնից այն դարձրեց ակնբախ ու անվիճելի: Եթե օրինատացիան ստեղծվեր ուսական զորքերի մտննալու հետևանքով, ապա այն պետք է վերացվեր նրանց հետնալուց հետո, մինչդեռ մենք գիտենք, որ Պետրոսի արշավանքից հետո սկսված ծանր փորձութիւններն ու խորը հիասթափութիւնն անգամ չկարողացան թուլացնել Ռուսաստանի նկատմամբ հայերի ակնկալութիւնները: Ընդհակառակը, Ռուսաստանը այնուհետև դարձավ այն միակ երկիրը, որի հետ հայութիւնը վերջնականապես կապեց իր ազատագրական հույսերը:

\*  
\*\*

Հայ-ուսական հարաբերութիւնները պատմութեան մինչպետրոսյան շրջանը կարելի է բաժանել երեք էտապի:

1. Կիևյան Ռուսիայի օրից մինչև 16-րդ դարի 2-րդ կեսը, երբ հայերի կապերը Ռուսաստանի և ուսաների հետ էպիդոլդիկ են և չեն վերածել սխտեմատիկ փոխհարաբերութիւններու:

2. Իվան IV-ի թագաւորութիւնից մինչև 17-րդ դարի 60-ական թվականները, երբ Կազանի ու Աստրախանի նվաճմամբ և ուսական ազդեցիկ պետութեան կազմակերպմամբ ամրապնդվում են հայ-ուսական առևտրական, անտեսական ու քաղաքական կապերը՝ որպես հետևանք Ռուսաստանի արևելյան քաղաքականութեան՝ ակտիվացման և նրա փորձերի՝ հենվել Անդրկովկասի ժողովուրդների վրա թյուրքերի և նրա վասալ Ղրիմի դեմ մղված պայքարում: Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում և հայերը ի գեմս Ռուսաստանի այդ շրջանում տեսնում են զորեղ պետութիւն, որի հովանավորութիւնը ռեալ նշանակութիւն ու մեծ հեռանկարներ ունի: Հայ-ուսական հարաբերութիւններն այս շրջանում բնութագրվում են առևտրական կապերի դարդացմամբ, հայերի մասնապահան փախուսաների, գաղութներ ստեղծելու փորձերով և ուսական օրինատացիայի սահմանավորմամբ:

3. 1660-ական թվականներից մինչև դարի վերջը, երբ ուսական պետութեան հետագա ուժեղացմամբ և համառուսական շուկայի ստեղծմամբ Ռուսաստանի կապերը Արևելքի հետ ավելի են ամրապնդվում: 1667 թվին Ռուսաստանը պայմանագիր է կնքում Լեհաստանի հետ (ըստ էության ուղղված թյուրքերի դեմ), նույն թվին Ռուսաստանը փորձում է կոալիցիա ստեղծել եվրոպական պետութիւնների հետ և նույն 1667 թվին Ռուսաստանը կնքում է առևտրական պայմանագիր հայկական ընկերութեան հետ՝ նպատակ ունենալով Անդրկովկասում ստեղծել պայքարում արեւելեյան քաղաքականութեան համար: Այս շրջանում է, որ ուսական օրինատացիան ձևավորվում է որպես թյուրք-պարսկական լծից ազատագրվելու միակ իրական ճանապարհ:





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032832

(204)

A  $\frac{r}{32832}$